

ՄԱՅԻՍ 1862 ԹՈՒԱԿԱՆԻ·

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ·

ՌԷՅՆԵՔԷՔ ԱՂՄՈՒԿՍ

(Reineke Fuchs)

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԵՐԷՆԻՑ·

1· Էասաւ պենտեկոստէն, գարնանային տօնը, և նորոգուած անտառի մէջ նորել թռչունները ժողովէց իւր պալատականները։ Ամեն կողմից եկան ներկայացան մեծ և փոքր կալուածատէրք, միայն խորամանկ ՌԷՅՆԵՔԷՆ չերևեցաւ։ Նա վախումէր ժողովուած գազաններից. պատճառ, որ նոքա բոլորեքեան վկրաւորուած էին նորանից, և իւրաքանչիւրը գանգատ ունէր ՌԷՅՆԵՔԷԻ վերայ։ Յառաջ եկաւ Իզէգրիմը, գայլը, իւր եղբայրնեռով և բարեկամներով և գանգատեց, թէ ՌԷՅՆԵՔԷՆ վկրաւորել էր նորա կինը և որդիքը։ Յետոյ երևեցաւ յովազը նապաստակին պաշտպանելու համար, և պատմեց թէ ինչպէս ՌԷՅՆԵՔԷՆ խոստացել էր նապաստակին մատրանապետ շինել, և երկեցողութեան դասի ժամանակ այնպէս սաստիկ բռնել էր ատամներով նորա վզից, որ միայն յովազի անակնկալելի գալուստը կարողացաւ ազատել նապաստակը մահից։ Եւ շատ զանազան գանգատներ ևս կային։ Գոհմաբարքը, ՌԷՅՆԵՔԷԻ եղբօրորդին, աշխատումէր իւր երկարատև ճիգ ճառով արդարացնել Աղուէսը մեղադրանքից, պատմելով

այլև այլ ընչաւորների ղանազան որոգայթները ընդդէմ Ռէյնեքէի, և յաւելացնելով դորա վերայ, թէ նա այժմ փոխել է իւր կենցաղավարութեան կերպը, ճգնաւորի կեանք է վարում, յաղթահարուած իւր մարմնական ցանկութիւնները, և արդէն շատ ժամանակ է, որ մեղքեն չէ ուտում։ Բայց հազիւ կարողացաւ նա վերջացնել իւր ճառը, ներկայացաւ Հէննինգը տնով ու տեղով։ Արիւնաշաղախ մահճի վերայ ընկած էր առանց գլխի առաքելի քառասփուսը, Հէննինգի կինը, քսան զաւակի գթոտ մայրը։ Բարձրաձայն հառաչելով Հէննինգը, պատմուեց, ինչպէս նոքա խաղաղ բնակուելիքեն մի վանքի գաւթում, և երբէք չէին համարձակուում գնալ անտառ, վախենալով Ռէյնեքէի որոգայթներից։ Բայց նա միանգամ եկաւ նոցա մօտ ճգնաւորի հագուստով, և ցոյց տուեց թագաւորական հրովարտակը, որի մէջ իբրև թէ շնորհած էր յաւիտենական խաղաղութիւն բոլոր գաղաններին։ Ա՛յն ժամանակ քառասփուսը համարձակուեցաւ բոլոր որդիներովը գնալ անտառ, բայց միայն հինգը նոցանից վերադարձան, մնացածները պատառ պատառ արեց Ռէյնեքէն։ Թագաւորը սաստիկ բարկացաւ. հրամայեց մեծ հանդիսով թաղել խեղճ քառասփուսը, և ուղարկեց արջը Ռէյնեքէի մօտ, որ բռնութեամբ կամ խորամանկութեամբ բերէ նորան թագաւորական դուռը։

2. Խառուանը բոլոր օրը թափառեցաւ ամայի անապատում, և դէպ ի գիշեր հասաւ այն նարերի մօտ, ուր իւր բազմադանձ Մալեպարտ ամրոցում բնակուում էր Ռէյնեքէն։ Գաւիթը փակ էր, և Խառուանը դուրսից յայտնեց նորան թագաւորի յանձնարարութիւնը։ Ռէյնեքէն ստիպեց նորան երկար սպասել, վերջապէս դուրս ելաւ, մեծ յարգանք ցոյց տուեց հիւրին, ներողութիւն խնդրեց, որ կարող չէ իսկոյն ճանապարհ ընկնել նորա հետ. պատճառ, շատ մեղը էր կերել և դորանից ծանրացել էր ստամքը։ — «Ի՞նչպէս, մեղը, բացագանչեց արջը, օ՛հ, ես սաստիկ վաստակեցայ ճանապարհի երկարութենից և շատ քաղցած եմ, տո՛ւր ինձ փոքր ինչ ուտելու այդ բանից»։ — «Մեղը. ինչքան որ կամենաս», պատասխանեց Ռէյնեքէն, ցածում սարի տակ բնակուում մի ռամիկ, որից միշտ ես ուտելիք եմ գնում, եթէ կամիս, երթանք, եղբայր, նորա մօտ»։ Խառուանը շատ ուրախացաւ։ Ռամկի գաւթի մէջ գտան նոքա մի կարծր հաստատմամբ կաղնի, որի մէջ ռամիկը մեղրել էր մի երիվար (սեպ), ճեղքելու համար։ «Հապա՛, կոխիր յուդկդ (դունչդ) այս տեղ, որքան կարելի է խոր», ասաց Ռէյնեքէն, «Ա՛յս ծառի մէջ կայ մեղը, շատ աւելի քան թէ որչափ դու կարծումես»։ Արջը ներս կոխեց կնճիթը մինչև ականջները և դրեց առաջին թաթերը ճեղքուածքի մէջ, իսկ Ռէյնեքէն հանեց երիվարը և կամաց կամաց փախաւ տուն։ Խառուանը տեսաւ, որ ինքը անկաւ որոգայթի մէջ։ Ի զուր թշնամանք էր կարդում նա, սպառնում էր և խնդրում, գոռում էր և կանչում։ Ռամիկը լսելով նորա մռնչիւնը, դուրս վազեց, և տեսանելով արջը, վազեց դէպ ի գինետունը և բերեց այն տեղից այլ ռամիկներ, կացինները և ահագին գաւա-

զաններըը ձեռներում բռնած։ Նորա այնպէս ծեծեցին Բռաունը, որ արիւնը գետօրէն վազումէր, և շատ կարելի է որ սպանէին նորան, եթէ արջը սաստիկ ուժով չհանէր գլուխը և մորթեմորիկ թաթերը ճեղքուածի միջից։ Դորանից ծագեցաւ ընդհանուր շփոթ, և Բռաունը յաջողակ ժամանակ գտաւ նետուելու ջրի մէջ, և հոսանքը տարաւ նորան մի քանի մղոն դէպ ի ցած։ Արիւնաթաթախ յանդիման եղաւ նա թագաւորին։ Կատաղեցաւ Նոբլը (թագաւորը), որ Ռէյնեքէն այնպէս վարուել էր իւր դեսպանի հետ, և երդուաւ Բռաունի վրէժը առնուլ չարագործից։ Անյապաղ պատրաստուեցաւ կատուն Հինգէ դէպ ի Մալեպարտ գնալու, որ խորամանկութեամբ հաւանեցնէ Աղուէսին դալ պալատ։

3. Հինգէն ողջամբ հասաւ Մալեպարտ։ Ռէյնեքէն մեծ պատուով ընդունեց և նորան։ Բայց որովհետև Հինգէն չէր կամենում մեղը ուտել, և ուրիշ բան ևս չկար տան մէջ, այդ պատճառով տարաւ նորան Ռէյնեքէն մի գիւղական քահանայի ամբարանոց, որ իւր համար մկներ բռնէ այն տեղ։ Նախընթաց երեկոյին Ռէյնեքէն դողացել էր այն ամբարանոցից մի քանի հաւ, և քահանայն ծակի առաջև, որ տեղից ներս էր մտել նա, դրել էր ականատ։ Ռէյնեքէն գիտէր այդ։ «Ահա, մտիր այս տեղ», ասաց նա կատուին, «Իսկ ես պահապան կը լինիմ»։—Եւ երբ կատուն ներս կոխեց գլուխը ծակի մէջ, իսկոյն ընկաւ ականատի մէջ։ Ռէյնեքէն վախաւ, իսկ Հինգէն անհնարին աղաղակով զարթեցրեց բոլոր մարդիկը տան մէջ։ Սկսան նորան ծեծել, և շատ կարելի է սպանած լինէին նորան, եթէ բաղդաւոր բերմամբ չկտրուէր պարանը։ Աչքը դուրս հանած, մորթը բրդգած, դարձաւ նա դէպ ի թագաւորի պալատը։ Առիւծը վառուեցաւ բարկութեամբ, և միայն յովազը հանդարտեցրեց նորան, խոստանալով իսկոյն ճանապարհ ընկնել Ռէյնեքէի քամակից, և բերել նորան միւս օրը պալատ։ Յովազը կատարեց իւր խոստումը։ Ռէյնեքէն հանդարտութեամբ ականջ դրեց նորան և հասկացաւ, որ ամենից լաւ է դնալ յանդիման լինելու թագաւորին։ Նա յոյս ուներ խորամանկութեամբ աղատուելու փորձանքից և դարձուցանելու թէ իւր և թէ իւր ընտանիքի գլխից թագաւորի ահեղ բարկութիւնը։ Եւ այսպէս նորա առաւօտուն ճանապարհ ընկան։ Ճանապարհին Ռէյնեքէն խոստովանեց յովազին իւր բոլոր մեղքը և պատմեց իւր բոլոր չարագործութիւնքը և յովազը բոլորովին ներեց նորան։ Սրտապատառ հասաւ Ռէյնեքէն թագաւորական պալատ։

4. Երբ իմացան, որ վերջապէս եկաւ Ռէյնեքէն, բոլորեքեան վազեցին պալատ, և անհամբեր սրտով սպասում էին տեսանել նորան։ Ռէյնեքէն արձակ համարձակ կանգնեցաւ թագաւորի առաջև, և սկսաւ իւր ճառը այսպէս. «Գիտեմ, շատերը ատում են ինձ այն պատճառով, որ դու ողորմած ես դէպ ի ինձ. Հալածում են ինձ և բամբասում, բայց դու արդար ես, և այդ միխթարում է ինձ իմ այժմեան վիճակի մէջ»։—Թագաւորը պատասխանեց.

«Լուիր, ահա կանգնած են քո դատախազները, արդարացրու՛ քո անձը նոցա առաջև, եթէ կարող ես։ Քո ասածներին պիտի հաւատամ ես»։ Եւ ահա ըղձապատումն Թագաւորի գահը անտառի և անապատի մեծ ու փոքր գաղանները, և գանգատումն Ռէյնեքէի վերայ։ Ռէյնեքէն երկար ու ձիգ խօսումէ արդարացնելով իւր անձը, և անօրինակ աջողակութեամբ ասելիքը Թափուտեն նորա բերանից, որպէս թէ նա ղուտ ճշմարտութիւն էր խօսում։ Բայց գանգատաւորների թիւը փոքր առ փոքր յաւելանումէ. վերջապէս ճշմարտասէր և անկողմնաւոր դատաւորները մէջ են մտանում, և լսվումէ հասարակաց ձայն. «Մեղաւո՛ր է դա, մեղաւո՛ր է ըստ ամենայնի»։ Թագաւորը վճռեց, որ կախ տան Աղուէսը։ Ռէյնեքէն իւր անձը յաղթուած համարեց և կապած սառած, սիրտը խռովութեամբ լի, կանգնած էր աթոռի առաջև։ Նորա ազգականները և մերձիմները մեծ տհաճութիւն ցոյց տուին, որ այդպիսի անարժան դատաստանի հանդիպել էր տէրութեան պլխաւոր բարոններից մինը, և թողեցին պալատը։—Այս շատ անախորժ թուեցաւ Թագաւորին. բայց սաստիկ էր պարտաւորողների կատաղութիւնը, և Թագաւորը ստիպուեցաւ տեղիք տալ նոցա։ Ամենեքեան ուրախացան այդ բանի վերայ, մանաւանդ Իզէգրիմը, Բռաունը և Հինցէն աշխատումէին, որ Ռէյնեքէն չփախչի. նոքա տարան նորան պաշտ, ուր արդէն պատրաստած էր կախաղանը։ Թագաւորը, Թագուհին, բոլոր պալատականները և գաղանների բազմութիւն խումբը շրջապատել էին նորան։ Ռէյնեքէն կանգնեցաւ աստիճանի վերայ։ Այդ ժամանակին գարձուց նա դէմքը դէպ ի Թագաւորը այսպէս. «Տեսանումեմ, որ մահից աղատուելու յոյս չկայ. ո՛չ, թո՛յլ տուր յայտնել քեզ մի քանի ուրիշ ծածուկ գործած յանցանքս, որ միւսերը անարդարութեամբ չպարտաւորուին դոցանով։—Թագաւորը թոյլ տուեց, և Ռէյնեքէն սկսաւ պատմել իւր մանկութեան հասակի անցքը, թէ ինչպէս նա մի ժամանակ բարեկամացել էր գայլի հետ, թէ ինչպէս գայլը խաբել էր նորան, և թէ ինքը կ'մեռանէր սովից, եթէ չկերակրուէր իւր պահած գանձով։ «Ի՞նչ գանձով», բացագանչեց Թագաւորը, «Ո՞ր տեղից է քո գանձը»։ «Այո՛, այդ հին պատմութիւն է», ասաց Ռէյնեքէն։ Այդ այն ժամանակն էր, երբ կամենումէին քեզ սպանել»։—Այն ժամանակ Թագաւորը զարհուրած գոչեց. «Լռեցէք ամենեքեանդ. Ռէյնեքէ, մօտեցի՛ր դու ինձ և պատմի՛ր քո կեանքի բոլոր եղելութիւնքը։ Բայց արդա՛ր խօսիր, մի՛ մոռանար, որ գերեզմանի դրան սեամի վերայ կանգնած ես։ Ոչինչ կարող չէ աղատել քեզ մահից, ուրեմն մի՛ ծանրացնիր հոգիդ նոր մեղքերով»։

Ա. Ահա ինչ պատմեց Ռէյնեքէն. «Միանգամ հայրս բաղդ էր ունեցել գտանելու մի մեծ գանձ։ Այդ յաջողութեամբ շատ հպարտացաւ նա, սկսաւ ինքնիշխանաբար վարուիլ, խռովեցաւ Թագաւորի հետ և ապստամբեցաւ նորանից։ Նա մարդ ուղարկեց Բռաունի մօտ, հրաւիրելու նորան գալ Ֆլանդրիա և տիրել Թագաւորական գահին։ Բռաունը ուրախութեամբ

ընդունեց այդ առաջարկութիւնը. պատճառ, վաղուց աշխատումէր ձեռք բերել Հայրական գահը, որին դու ես տիրում՝ Հինգէն, Իզէգրիմը և Գուիմբարթը (շունը) նոյնպէս նորա հետ միացան, և վճռեցին մի մութ գիշեր սպանել Թագաւորը և նորա տեղ Թագաւոր օծել Բռաունը Ախէն քաղաքում։ Այդ խորհրդով Հայրս իւր հարստութեան ձեռնտուութեամբ պարտ էր շատ զօրք ժողովել։ Ես իմացայ այդ բանը կնոջից, և գիտենալով Բռաունի չար բարքը, զուշակեցի տէրութեան տխրալի ապագան և այդ պատճառով յանձն առայ քակտել այդ խորհուրդը։ Դորա համար նախ և յառաջ հարկ էր ինձ գողանալ նորա գանձը։ Իմանալով պահեստի տեղը, ես կնոջս օգնականութեամբ բոլորը կամաց կամաց դուրս հանեցի այն տեղից։ Այս միջոցում Հայրս գնաց շրջելու Էլբա և Ռէյն գետերի մէջ գտանուած աշխարհները և առատ տուրք խոստանալով, ժողովեց անթիւ զօրք։ Բայց երբ վերադարձաւ դէպ ի տուն և չգտաւ իւր գանձը, այնուհետև առնթապարտութենից և բարկութենից վախուեցաւ։ Այսպէս ահա զոհեցի ես իմ Հայրս, քեզ ազատելու համար, ո՛վ Թագաւոր, և ինձ կամենումն այժմ կասել, մինչ քո նենգաւոր թշնամիները, Բռաունը, Իզէգրիմը և Հինգէն քո խորհրդակիցներն են»։ — Թագաւորը մտածեց ձեռք բերել գանձը, տարաւ նորան մի կողմ և հարցրեց. «ուր է քո գանձդ»։ — Ռէյնեքէն յանձն չառաւ յայտնել գանձը, մինչև որ Թագուհին խոստացաւ նորան կեանք և ազատութիւն։ Այն ժամանակ ասաց նա. «Ֆլանդրիայի արևելեան կողմումը անապատի մէջ կայ մի փոքրիկ անտառ, այն անտառի մէջ կայ մի աղբիւր, որի մօտ բուսանումէ մի տեսակ ծառ. այն տեղ Թաղեցի ես. բայց ես քեզ խրատ եմ տալիս, որ ինքդ գնաս գանձը հանելու»։ Իսկ երբ Թագաւորը յայտնեց իւր ցանկութիւնը, որ Ռէյնեքէն առաջնորդէ նորան դէպ ի այն տեղ, Աղուէսը պատասխանեց. «Շատ ուրախ կ'լինեմ, սակայն Հռոմի Պապը արտաքսել է ինձ եկեղեցու հաղորդութենից, և դու չես կարող գալ իմ հետ։ Լաւ է, թոյլ տուր ինձ յառաջ ուղևորուիլ դէպ ի Հռոմ և Թողութիւն խնդրել սրբազան Հօրից»։ — Այս խնդիրը հիմնաւոր երևեցաւ Թագաւորին և սա արձակեց նորան, ինչպէս ցանկանումէր նա։

6. Թագաւորը յայտնեց բոլոր ժողովին, որ Ռէյնեքէն դարձեալ շնորհ գտաւ. Ռէյնեքէն խնդրեց Թագաւորից մի կտոր Բռաունի կաշուց մախաղի համար, իսկ Իզէգրիմի և նորա կնոջ ոտերից հողաթափ, ճանապարհի համար։ Այս բոլորը ստացաւ նա և ծաղրածութեամբ հրաժարուեցաւ նոցանից որ խոցուած էին նորա շնորհագիւտ լինելովը Թագաւորի առաջև։ Ցետոյ կրկին յանդիման եղաւ Թագաւորին և խնդրեց նորա օրհնութիւնը իւր ճանապարհորդութեան համար։ Նա հրամայեց իւր մատրանապետ Բէլլինին, ոչխարին, օրհնել ուխտաւորը։ Ռէյնեքէն դառն արտասուքով հրաժարականի ողջոյն տուեց Թագաւորին, և նա հրամայեց բոլոր գաղաններին ուղեկից լինել նորան։ Ցետոյ, երբ որ նոքա կամենումէին վերադառնալ, Ռէյնե-

քէն խնդրեց Բելլինից և Լամբէից (նապաստակից) երթալ իւր հետ մինչև Մալեպարտ։ Այն տեղ Լամբէն Ռէյնեքի հետ մնաւ սենեակ, իսկ Բելլինը ճնշոց անտառում խոտ որոնելու իւր համար։ Ռէյնեքէն սկսաւ սատիկ յանդիմանել նապաստակը, ըստ որում նա պարտաւորել էր իւրեան թագաւորի առաջև և կոչեց նորան դաւաճան։ «Դաւաճանը պարտ է մեռանիլ, բացագանչեց վերջումը Ռէյնեքէն, կտոր կտոր արեց նապաստակը և կերաւ իւր կնոջ և որդիների հետ։ Երբ Բելլինը եկաւ Լամբէի քամակից, տուն կոչելու նորան, Ռէյնեքէն ասաց, որ Լամբէն կ'ննայ նոցա մօտ գիշերելու, խընդրեց Բելլինից միայնակ վերադառնալ, իւր հետ տանելով շատ հարկաւոր նամակներ առ թագաւորը։ Նա ծածուկ դրեց մախաղի մէջ նապաստակի գլուխը և տուեց ոչխարին — «կարող ես ասել թագաւորին, որ դու իմ հետ միասին շարադրել ես այս նամակը»։ — Բելլինը ևս վարուեցաւ այնպէս. բայց երբ թագաւորը բացեց մախաղը և տեսաւ նորա մէջ Լամբէի գլուխը, զարհուրած գոչեց. «Ո՛վ դու չարագործ, դու խաբեցիր ինձ»։ Բոլոր անասունները շփոթմունեան մեծապէս։ Թագաւորը իսկոյն աշխատեցաւ հաշտուիլ Բռաունի և Իզէգրիմի հետ, տուեց նոցա իւրեանց զաւակներին ի միջոցն ջնջուոր ծառայութիւն բոլոր ազգը Բելլինեանց, և բոլոր գազանները ոտքի վերայ կանգնեցրեց, որ շուտով բռնեն և կախ տան Ռէյնեքէն։

7. Այժմ նախ և յառաջ ի պատիւ Իզէգրիմի և Բռաունի, պալատում կատարեցին վառուող խնջոյքներ, ուր հրաւիրած էին հիւրեր ամենայն կողմից։ Ուճ օր ուտումէին, խմումէին և ուրախանում։ Մի օր, երբ ամենեքեան սեղան նստած էին, երևեցաւ յանկարծ ճագարը արիւնաթաթախ գլխով և գանգատեց, թէ Ռէյնեքէն ուխտաւորի զգեստով յարձակուել էր նորա վերայ անտառում և վիրաւորել էր նորան, և թէ հազիւ կարողացել էր նա վախստականութեամբ աղատել իւր գլուխը։ Նորանից յետոյ ներկայացաւ սգաւոր և պատմեց, թէ նա իւր կնոջ հետ միասին տեսել էր դաշտումը Ռէյնեքէն մեռելի նման պառկած. նոքա կարեկցութենից մօտեցել էին նորան, բայց երբ սգաւոր անզգոյշ կինը կամեցել էր համբուրել հանգուցեալը շրթունքը, նա վեր էր թռել տեղից և կերել էր նորան։ — Այն ժամանակ թագաւորը երդուաւ խստութեամբ վրէժ առնուլ Ռէյնեքեից այդ մարդասպանութեան և յանդուգն խաբեութեան համար։ Թագուհին խնդրեց նախ և յառաջ կոչել Ռէյնեքէն դէպ ի ատեան գատաստանի և իւր անձը արդարացնելու։ Բայց թագաւորը հրամայեց բոլոր գազաններին վեցերորդ-օրին պատրաստուել դէպ ի պատերազմ, և ինքը կամեցաւ առաջնորդել զօրքին դէպ ի Մալեպարտ։ Այս խօսքով նա արձակեց իւր հիւրերը։ Բայց Գոխխարթը ծածուկ գնաց խորհրդարանից Ռէյնեքեի մօտ և պատմեց նորան ամենայն ինչ, որ պատահել էր պալատում, այսինքն, թագաւորի բարկութիւնը և դիտաւորութիւնը։ Ռէյնեքէն լսումէր հանդարտ մեծարանքով դէպ ի Գոխխարթը, և նորա հետ մնաղ աղաւնիներ։ — Միւս

առաւօտուն հրաժարուեցաւ Ռէյնեքէն կնոջից, թէպէտ կինը դգուշացնում էր նորան և թախանձանքով խնդրում տանը մնալ: Ռէյնեքէն մխիթարեց նորան, խոստանալով վերադառնալ հինգ կամ վեց օրից յետոյ, և ճանապարհ ընկաւ Գոլմբարթի հետ:

8. Ճանապարհին Ռէյնեքէն վերսին խոստովանեց Գոլմբարթին իր բոլոր մեղքերը, որոց արդէն ծանօթ ենք մեք, և կամենում էր արդարացնել այդ մեղքերը նորանով, որ ուրիշները էս պէսէս են վարում, այո՛ դեռ էս աւելի վատթարաբար: Ցառաջ նա դիպաւ թագաւորի և իշխանների շահասիրութեանը և աչառութեանը, որոց տեղեակ են ամենքեան, բայց, ոչ ոք չէ համարձակւում ընդդիմաբանել նոցա, մինչ աննշան գողերին միշտ կախում են: Ցետոյ անցաւ դէպ ի շահախնդիր և կեղծաւոր քահանաները, որք քարոզում են մարդերին բարեգործութիւն, սակայն ինքեանք մոլեկան կեանք են վարում և իւրեանց օրինակով դպրոցակրեցնում աշխարհականները: Այս տեղ իսկ պատահեցաւ նոցա Ճառերը (կապիկը), որ երթումէր Հռովմ: Նա քաջալերեց Ռէյնեքէն, խոստանալով Հռովմի մէջ իւր հզօր աղգականների արծաթով ազատել նորան եկեղեցական նզովքից, խրատ տուեց նորան համարձակապէս ներսրծել պալատում, և նեղութեան ժամանակին իմաց տալ իւրեան: Լինելով մի այդպիսի դիպուած, նա իւր ընկերների ձեռքով այնպէս առաջ կ'տանի գործը, որ նորա համար Պապը կ'ըսպառնայ թագաւորին, բանադրանքի տակ ձգել նորան: Այլ էս պատուիրեց Ռէյնեքէին գնալ տեսութիւն իւր ամուսնուն պալատում, որ մեծ պաշիւ ունէր թագաւորի և թագուհու առաջև: Վստահ և ուրախ գնաց Ռէյնեքէն Գոլմբարթի հետ դէպ պալատ:

9. Ընկերքեան զարմացան, երբ տեսան Ռէյնեքէն. ընկերները ուրախացան, իսկ թշնամիները սկսան տրտնջալ: Բայց նա ծունր խոնարհեցրեց գահի առաջև, երդմամբ հաստատեց իւր անմեղութիւնը, և յանձնեց իւր անձը թագաւորի արդարադատ պաշտպանութեանը: Երբ սկսան յանդիմանել նորան վասն նորա անիրաւութեան դէպ ի ճագարը և ագռաւը, Ռէյնեքէն պատասխանեց, թէ նա երևելու չէր պալատում, եթէ մեղաւոր լինէր: «Ինձ դատապարտումն անիրաւաբար, խօսքը յառաջ տարաւ նա: Պիտոյ է լսել երկու կողմին էս, և ոչ թէ միայն զբպարտողներին: Թող գան նոքա այս տեղ, և արդարացնեն իւրեանց անձը: Ահա բանը ինչպէս եղաւ. Ճագարը քաղցած եկաւ իմ տունս, ես տուեցի նորան ուտելիք, և երբ որ դիւբս կամեցան ճաշակել նորա ամանից, սկսաւ նա կռուել նոցա հետ. ես ազատեցի նորան վտանգից, թէև ականջը կտրած. իսկ ագռաւի մասին ես ամենևին մեղաւոր չեմ, որ նա մեռաւ: Ագռաւը ինքը դանգատումէր ինձ արտասուալից աչքով, թէ նորա կինը շատ ձուկն էր կերել և խնդրումէր ինձանից ազատել նորան, բայց արդէն բանը բանից անցել էր: Եթէ ես այժմ ճշմարիտ չեմ ասում, թող մենամարտութիւնը վճռէ մեր գործը»:—Երբ

որ Ճագարը և ագռաւը տեսան գործի այսպիսի ընթացքը, շուտով հեռացան պալատից։ «Բայց ինչո՞ւ համար սպանեցիր դու Լամբէին Բելինի հետ միասին. Բելինը իւր պատուհասը ստացաւ, այժմ արդարադատութիւնը պահանջում է քո կեանքը», ասաց թագաւորը։— «Ի՞նչ, Լամբէն սպանուածծ է, ո՛վ Աստուած, ի՞նչ եմ լսում, նոյնպէս և Բելի՞նը։ Ո՛հ, լաւ կ'լինէր, որ ես երբէք ծնած չլինէի, կորաւ իմ թանկագին գանձը։ Ես նոցա հետ ուղարկել էի այնքան թանկագին բաներ, ո՛ւր են»— թագաւորը զայրացաւ ու հեռացաւ դահլճից։ Թագուհու ներքին սենեակներում գտաւ նա Մարտինի կինը։ Սա սկսաւ բարեխօսել Ռէյնեքէի համար և յիշեցրեց թագաւորին նորա ցոյց տուած արդիւնաբերութիւնքը. սորանից յետոյ թագաւորը դարձաւ դէպ ի դահլիճը ըստ բաւականին խաղաղասիրտ։ Այն տեղ Ռէյնեքէն գեռ ևս հառաչումէր բարձրաձայն, իբր թէ կորուսած գանձի վերայ և խնդրումէր թագաւորից օգնութիւն դարձուցանելու այդ կորուստը։

10. Ռէյնեքէն նկարագրեց յետոյ մանրամասնաբար թագաւորին ուղարկած բաները. միտ դնելով նորա խօսքին, այդ բաները էին մի թանկագին մատանի որ ունէր հրաշալի զօրութիւն, ճարտարարուեստ շինած հայելի, և սաներ թագուհու համար։ Յետոյ յիշեցրեց թագաւորին, իւր և հօր արած ծառայութիւնքը թագաւորական գերդաստանին, և շատ զրպարտութիւններ արեց Իզէգրիմի վերայ։ Նորան յաջողեցաւ խաղաղեցնել թագաւորի սիրտը, այնպէս որ թագաւորը վերջապէս հաւատաց նորան և հրամայեց նորան գնալ ամենայն երկիր, որոնելու մատանին և հայելին։ Բայց Իզէգրիմը հանդէս եկաւ և պահանջեց, որ Ռէյնեքէն նախ և յառաջ ապացուցանէ իւր արդարութիւնը։

11. Ւյա պարտաւորեց Ռէյնեքէին դաւաճանութեամբ դէպ ի իւր կինը։ Ռէյնեքէն խրատ տուեց նորան դնել ջրի մէջ իւր պոչը, պնդելով որ նորանից ձուկ կ'կախուի։ Գայլ կինը բոլոր գիշեր կանգնեցաւ ջրի մէջ և նորա պոչը սառեցաւ։ Այն ժամանակ Ռէյնեքէն կանչեց ռամիկները, և գայլ կինը հազիւ կարողացաւ փախչել, թողնելով այն տեղ իւր պոչի ծայրը։ Նա ինքն ևս պատմեց, թէ միանգամ եկել էր ջրհոր. մի ջրհանը վերևումն էր, իսկ միւսի մէջ ցածումն նստած էր Ռէյնեքէն։ Աղուէսը սկսաւ պատմել նորան, թէ որքան ձկներ կային ջրհորի մէջ և հրաւիրեց նորան ցած իջանել։ Նա նստաւ նորա խրատութեամբ ջրհանի մէջ և իջաւ մինչև յատակը, իսկ աղուէսը վեր բարձրացաւ և փախաւ իսկոյն, թողնելով նորան ցածումը։ Նա չգտաւ այն տեղ ոչ մի ձուկ և անցուց ամբողջ օրեր աՀ ու դողով և քաղցած փորով, մինչև որ եկան շինականներ և դուրս հանեցին նորան, և այն ժամանակ ի հարկէ լաւ ևս ծեծեցին։ Ռէյնեքէն կարողանումէր գտաւնել ամենայն բանի պատասխան և իւր անձը բոլորովին արդար կացուցանել։ Իզէգրիմը հասկացաւ, որ կարող չէր բանաւոր փաստերով ապացուցանել նորա յանցանքը, պահանջեց որ վճռուի այս գործը մենամարտութեամբ։

թագաւորը համաձայնեցաւ, և միւս օրին ժամադրուեցաւ ատենական մե-
նամարտութիւն։ Խոլը գիշերը միասին անցուցին Ռէյնեքէն և նորա ընկեր-
ները խորհրդակցելով միմեանց հետ թէ ինչպէս պէտք էր պահպանութիւն
գտնել զանազան վտանգների երեսից։ Իսկ կապուհին կախարդեց նորան,
որով պիտի լինէր նա անյաղթելի։

12. Հաց ի գորանից Ռէյնեքէն ածելից իւր կռնակը և կուրծքը և օծ-
ուեցաւ իւղով, իսկ պոչը թրջեց մեխրաջրի մէջ։ Այսպէս, պատերազմի աս-
պարիզում (ուր Իզէգրիմը իւր ընկերներով սպասումէր արդէն նորան) երե-
ւեցաւ նա, պատրաստելով պալատականներին սաստիկ ծիծաղ։ Ցառաջ
Ռէյնեքէն ձևացաւ երկչոտ, և փախաւ գայլից, բայց յանկարծ պոչով զար-
կեց աչքին և այնպէս կուրացրեց նորան, որ Իզէգրիմը ողբալի ձայնով գո-
ռաց։ Յետոյ Ռէյնեքէն կանգնեցաւ հողմի դէմ և սկսաւ խառնել աւազը,
այնպէս որ փոշին թափվումէր դէպ ի նորա աչքը, և նա բոլորովին կուրա-
ցաւ։ Այն ժամանակ Ռէյնեքէն կատաղաբար յարձակուեցաւ նորա վերայ,
խածատեց, կեղեքեց նորան և հանեց աչքը։ Բայց գայլը զայրացած բռնեց
թշնամին և պղորեց դէպ ի գետին։ Ռէյնեքէն տեսաւ իւր անձը մեծ վտան-
գի մէջ և մեղմութեամբ խնդրեց գայլից խնայել նորան, խոստանալով դորա
փոխարէն իւր մշանջենաւոր բարեկամութիւնը, այլև փոխանակ նորա կա-
տարել մի ուխտադնացութիւն դէպ ի Երուսաղէմ, բաժանել նորա հետ իւր
որսը, և խոստովանել իւր անձը խաբեայ, բոլոր ժողովի առաջև։ Բայց
գայլը լաւ ծանօթ էր ստախօսին և չկամեր հաւատ ընծայել նորան։ Ցան-
կարծ Ռէյնեքէն նկատելով թշնամու անզգաստութիւնը, այնպէս սաստիկ
խածեց նորա փորը, որ Իզէգրիմը ուշաթափուած վայր ընկաւ, արեան մէջ
շաղախուած։ Սորանով վերջացաւ մենամարտութիւնը։ Իզէգրիմի ընկեր-
ները թողութիւն խնդրեցին թագաւորից յաղթողի համար, և թագաւորը
հրամայեց բաժանել միմեանցից մենամարտողները։ Ամենեքեան շնորհաւո-
րեցին Ռէյնեքէի յաղթութիւնը, մինչև անգամ շատերը գայլի ընկերներից
շրջապատեցին Ռէյնեքէն, բարեմաղթութիւնք առնելով։ Թագաւորը գովեց
նորան, կարգեց գարձեալ իւր ներքին խորհրդական և յանձնեց նորան ա-
ռաջին պաշտօնները և պատիւները։ Ռէյնեքէն ուրախութեամբ գլուխ խո-
նարհեցրեց թագաւորին և թագուհուն, և մի քանի օրով տուն գնաց — ար-
դէն երևելի իշխան գարձած։

«Այսպէս է լինում ամեն բան աշխարհումն» եղբարիակում առակը,
«և միշտ այսպէս կը լինի»։

Արտաքին Տեր Գրիգորեանց։

ՎԱՐՔԱԳՐՈՒԹԻՒՆ·

ԻՇԽԱՆ ԱԼԲԵՐՏՈՍ, ՎԻՔՏՕՐԻԱ ԹԱԳՈՒՀՈՒ ԱՄՈՒՍԻՆ ԱՑՐԸ·

(Revue Britannique. 1862. 2° Livraison. p. 93—104).

Երբ որ կենդանեան դուքսի աղջիկը, իւր Հօրեղբօր, Վիլհելմոս Զորրորդի աթոռանստուածեան միջոցին, ընդունվեցաւ նախընտիր ժառանգ թագաւորական աթոռի, Լօրդ Մելբուռնը յատկապէս պատուէր ստացաւ գալոց թագուհին ծանօթացնելու սահմանադրական կառավարութեան ըստ կզբնականոններին, և պատմական աւանդութիւններին այն թագաւորների և թագուհիների որ նորանից յառաջ կրել էին Բրիտանիայի իշխանութեան թագը: Մանուկ արքայազն աղջիկը յաջորդեց իւր Հօրեղբօրը 1837 թուականի յունիսի 20 ին, լինելով միայն տասն և եօթնամեայ հասակում: Նորա թագադրութիւնը եղաւ գալոց տարու յունիսի 28 ին: Երբ որ արդէն յանձնած էին նորան թագաւորութեան բոլոր յատկացուցիչ նշանները, այնուհետև կամեցաւ նա լցուցանել իւր ժողովրդի ցանկութիւնը, ընտրելով իւր համար մի ամուսին այր: Այս ընտրութենից յառաջ, Նորին մեծութիւնը, Վիքտորիա առաջինը պարտ էր գոնեայ մի յետահայեաց աչք ձգել յառաջընթաց անգլիական թագուհիների վերայ, որ սկսեալ Հենրիկոս ութերորդի դուստրներից գտանուած էին նոյնպիսի կացութեան մէջ, որպիսի իւրն էր, մի դժուարին կացութիւն, որովհետև մի անգլիական թագուհի, որ սահմանադրաբար (constitutionnellement) մնում է միայնակ թագուհի, ամուսնանալով պիտի յանձն առնուր կացուցանել իւր վերայ մի տէր և իշխան, ամուսնակցի կոչմամբ, ըստ կրօնի և քաղաքային օրէնքի: Այս երկիւղը անտարակոյս, պիտի ձեռնտու եղած լինէր այն ընդդիմութեանը որով Եղիսաբէթ բռնակալ և նախանձոտ թագուհին ընդդիմացել էր իւր սրտի կամ տարփասորութեան բոլոր առօրեայ ձգտողութիւններին, և գուցէ թէ օգտակար եղաւ նորա փառքին, որ բռնակալ և նախանձոտ թագուհին մեռաւ կոյս. պատճառ, իբրև արժանաւոր դուստր իւր Հօր, գուցէ թէ սատակիչ կացինը կախ տուած կը լինէր ամուսնական անկողնի մօտ: Նորա սուգ քոյրը, Մարիամ Թիւդորը բաղդաւոր եղած չէր իւր ամուսնակցութեամբ Կարոլոս Հինգերորդի որդու հետ, և եթէ նա ապրած լինէր, և ապա այս թագաւո-

ըլ ձեռնհաս եղած լինէր աւելի ամրապէս ապահովել իւր քաղաքական խորհուրդը Անգլիայի մէջ, որպէս ապահովել էր Եւրոպայի ցամաքահողի վերայ, այնուհետև մի՞ թէ հաւանական չէ, որ Փիլիպպոս Երկրորդի կամակոր անձնաւորութիւնը պիտի վերջապէս յաղթող հանդիսացած լինէր ընդդէմ թագուհի Մարիամին, որի հետ ամուսնացել էր նա պատուասիրութեան պատճառով։ Մի դար յետոյ, երրորդ անգլիական թագաւորը Սթիւարթների իշխանատոհմից, ունէր ինչպէս Հենրիկոս ութերորդը, երկու աղջիկ, որ թագաւորեցին, բայց այս եղաւ մի քաղաքական յեղափոխութեան (Revolution) ներգործութեամբ։ Առաջինը, Մարիամ անունով, պարտակից այս քաղաքական յեղափոխութեան, ենթարկուելով դորա հետևանքին, պարտ էր թագաւորական արժանաւորութիւնը բաժանել իւր ամուսին տղամարդի հետ և թողուլ նորան բոլոր ստոյգ իշխանութիւնը. պատճառ, Վիլհելմոս Օրանեանը ստացած լինելու չէր ոչ լոկ պատուանունը և ոչ երկրորդական բարձր աթոռի վերայ, որից արտաքսումէր իւր անեղբին, Բաղդատոր կերպով Մարիամը — որի առաքինութիւնքը մանաւանդ կեանքի մէջ արդէն ծանօթ է կացուցել մեզ Մակօլէյ պատմաբանը — ունէր ի բնէ մի անձնանուէր խոնարհ ամուսին կնոջ սիրտ։ Շատ ու շատ համարելով նա իւրեան թագուհու առանձնապատուութիւնը, ներողամիտ էր նա մինչև դէպ ի Վիլհելմոսի ամուսնական անհաւատարմութիւնքը, որ այնու ամենայնիւ թողումէին Մարիամին իւր ամուսին տղամարդի սիրալից մեծարանքը։ Յակոբոսի երկրորդ դուստրը, Աննա թագուհին թագաւորեց միայն և ինքնազլուխ. նորա ամուսին պրը, Գէորգ Դանեմարքացի, էր մի լոկ կնակից իշխան։ Սա էր մի իշխան առանց պատուասիրութեան, մի սիրելի, քան թէ ականաւոր ընաւորութեան տէր մարդ, որ կարող էր հասանել ծայրագոյն հրամանատարի իշխանութեան բոլոր զօրագունդերի վերայ և դառնալ մեծ ծուխպետ առանց յարուցանելու որ և իցէ ձգտողութիւն դէպ ի սահմանադրական կառավարութիւն, և առանց հրաժարուելու լինել առաջին հպատակը թագուհու։ Աննան իւր կողմից, ունէր նորա համար մի շատ մտերիմ բարեկամութիւն, լինելով սա առաւել քնքուշ ախտը այս թագուհու սրտի մէջ և այն ախտը որ մխիթարութիւն նորան, երբ որ նա զրկուեցաւ իւր բազմաթիւ զաւակների հօրից և որբացաւ այդ բոլոր զաւակներից իսկ։

Հանովերեան իշխանատոհմի թագաւորները ունեցել էին ամենքը առաջ ժառանգներ որ յաջորդեցին նոցա մինչև Գէորգ չորրորդը, որ ունէր միայն մի աղջիկ, իշխանուհին Շարլոտէ, որի պսակի վերայ Անգլիան հաստատել էր այնքան յոյսեր, որ մահը չէը զարթնից։ Այս յոյսերը, անտարակոյս, իշխանուհու ամուսին պրը պիտի գործակից եղած լինէր իրագործելու, որովհետև դա էր նոյն իսկ Սաքսոնական-Քոբուրգեան Լէոպոլդը որ յետոյ դարձաւ թագաւոր Բելգիայի, իւր ժողովրդին սիրելի թագաւոր, մի ազատասէր և իմաստուն թագաւոր, որի խորհրդակցութիւնքը կշիռ ու ծան-

յուԹիւն ունին Եւրոպական Թագաւորների պալատի մէջ... Երանի նոցա, որ կարողացած էին միշտ հետևել դոցա։

Հաստ բացայայտ է, որ Վիքտորիա Թագուհին երբեմն բաղդատուած լինելով Շարլոտտէ իշխանուհու հետ, տակաւին լսելով իւր շրջակայքում մի արձագանք այն կենդանի ցաւակցութիւններից որ ազդել էր նորա կանխահաս վախճանը, պիտի խոստովանելով իւր մէջ, որ նա կարող չէր աւելի բարձր ընթանալ, քան Թէ նմանելով նորան և իւր ամուսին տղամարդի ընտրութեան մէջ — այսպէս Վիքտորիան պիտի ստացած լինէր մի կանուխ նախապատիւ ձգտողութիւն դէպ ի մի իշխան քրուբրգեան տանից, որ արդէն տեսել էր քենսինգտոնեան պալատում։ Երբ որ նա կրկին անգամ տեսաւ նորան, դորա անձը, կերպարանքը և խոսակցութիւնը հաստատեցին միայն Վիքտորիայի կանխամուտ ձգտողութիւնը. ուրեմն շատ բնական էր, որ նա տեղիք տուեց մի ախտի, որ առաւել յաճախ թոյլ տուած է երազի մէջ միայն, տարփաւոր իշխանաղն օրիորդներին, որովհետև Թագաւորութեան պատճառը մանաւանդ, քան Թէ սէրը որոշումէ այն տղամարդը որ նոքա պարտ են բարձակից առնել իւրեանց, Թագաւորական գահի վերայ։

Իշխան Ալբերտոսը էր արդէն Վիքտորիայի մօրաքուեր որդին, ըստ որում Վիքտորիայի մայրը ամուսնանալով կենԹեան դուքսի հետ, էր Սաքսոնական-Քոբուրգեան իշխանուհի, և այրեացած իւր առաջին տղամարդից, Էքինգիայի ժառանգական իշխանից։ Ալբերտոս իշխանը, լինելով կրտսեր որդին Էրնեստ-Անտոնիոս-Կարոլոս-Լուդովիկոս դուքսին Սաքսոնական Քոբուրգիայի, ունէր իւր նախահարց մէջ բահմանապետ պրաֆենբերը Մէյսենիայի, կայսրընտիր իշխաններ գերմանական Թագաւորութեան, միջին դարերում, որ իւրեանց սկզբնաւորութիւնը առդարանում էին սաքսոնական քաջաղնից, Վիտիքինդից, այսինքն, կարծես մեծի առաւել ահարկու հակառակորդից։ Նա ծնած լինելով 26 օգոստոսի 1819 Թուականի Բօզնեան ամրոցի մէջ, չորս մղոն հեռաւորութեամբ Քոբուրգից, մկրտութեան աւազանի մէջ ստացել էր անուններս Ֆրանչիսկոս Աւգոստոս Կարոլոս Իմմանուէլ։ Իւր կրթութիւնը, որ մեծաբերումբ նա, իւր որդիների դաստիարակութիւնը ուղղելու համար, սկսաւ Էրընեստիգեան ամրոցի մէջ, Հայրական հսկողութեան տակ։

Իշխան Ալբերտոսը տասն և վեց տարեկան էր, իսկ նորա անդրանիկ եղբայր Էռնեստը տասն և եօթն, երբ ինքը նոցա Հայրը տարաւ նորանց դէպ ի Թագաւորական պալատը Վիեննայի, Բևրլինի և Դրեզդենի։ Յետոյ ամ Թագաւորութեամբ Ֆրիդրիկոս Աւգոստոս, գլուխը Քոբուրգեան գերդաստանի, Թէպէտ նա շատ իրաւամբ միայն մի կողմնական ճիւղի իշխանից, բայց դարան 1547 ին հասել էր արժանաւորութիւնը կայսրընտիր իշխանի։ Երկու քոբուրգեան իշխանները ուղևորվեցան յետոյ ճանապարհորդելու Հունգրստանի մէջ, և միայն գալոց տարուամբ, այսինքն 1835 ին այցելութիւն ա-

ընդին անգլիական պալատին։ Նոքա հիւրասիրութիւն գտան քենսինգտօնեան պալատում, ուր ունէր իւր բնակութիւնը կենթեան դքսուհին։ Եւ այս տեղ առա եղաւ առաջին տեսութիւնը իշխան Ալբերտոսի և իշխան օրլոդ Վիքտօրիայի մէջ, որ, ինչպէս հաւանական է, այնուհետև պահումէր իւր մէջ մի քաղցր յիշատակ, թէպէտ կարողացաւ նա լուռ մնալ մինչև այն օրը, երբ կարող էր խօսել որպէս թագուհի։ Լանդենից երկու երիտասարդ եղբարքը եկան փարիզ, աղջնեղու Լուդովիկոս Փիլիպպոս թագաւորը, որի երկու զաւակները ամուսնացած էին նոցա հօրեղբարց հետ, և նոքա այս ուղևորութիւնը դէպ ի եւրոպական պալատքը վերջաւորէին Բրիւքսէլում, մնալով այն տեղ երկար միջոց, իբրեանց հօրեղբօր, Լէոպոլդի մօտ։ Այս տեղ վերսին սկսան նոքա պարապել իւրեանց գիտութեամբը, և պրօֆեսօր Քեռելետը ամօրժելով գովաստանութեամբ թագաւորի առաջև այն իմաստուն ուշադրութիւնը որ իշխան Ալբերտոսը ցուցանումէր նորա մանրամասնական դաստատութիւններին։

Լէոպոլդ թագաւորը քաջ գիտելով թէ ինչքան օգուտ էին ստացել իւր հնոջ մանուկ եղբարքը, իշխանքը Օրլէանի, ուստ մնասիրելով գիտութիւնքը լեզուների մէջ և ունկնդիր լինելով հրապարակական դաստատութիւններին համալսարաններում, պատճառ տուեց քոլութիան գաբսին իւր օրդիքը շինելու հասարակ աշակերտներ Քոննեան համալսարանի։ Սոքա երկուքն ևս իւրեանց անձը երևելի կացուցին բոլորիցուն մէջ իւրեանց ժրաջան յառնախելքով գէպ ի համալսարան և ունկնդրութեամբ ծանր և կարևոր դաստատութիւնների, զօր օրինակ ճիշդ գիտութիւնք, պատմութիւն, փիլիսոփայութիւն, իրաւաբանութիւն և այլն և այլն։ Նոքա որոնումէին առանին խօսակցութիւնը պրօֆեսօրների և զարմացնումէին որպէս Շվեգիները, նոյնպէս և Վիլքերին իւրեանց ազնուական ազգակից իմացականութեամբ։ Նոյն միջոցին, գեղեցիկ հմտութիւնների պարապումը ապահովումեր նորանց այն միակրոնների իմաստակութենից, որով կարող էին նոքա վարակուիլ, մանաւանդ իւրաքանչիւր ունելով ևս վերտառութեամբ գօրտօրների հետ։ Բանաստեղծութիւն, երաժշտութիւն, նկարչութիւն զբաղեցնումէին նորանց այնպէս, որպէս թէ նոքա նուիրել էին իւրեանց անձը ճարտարապետական պաշտօնի։ Իշխան Ալբերտոսը շարադրումէր երաժշտական եղանակներ և գրումէր նոցա իմաստները։ Երբ որ ամառնային պարապը ընդհատումեր դաստատութիւնքը, երկոքին իշխանները երթումէին ոտով շրջելու Շվեյցարում կամ իտալական Ալպերի մէջ և վերադառնումէին այն տեղից բերելով իւրեանց հետ ուրուագրական և աստիւրագրական պատկերներ որ արժանի էին ճոխացնելու մի թագուհու ծոցագիրք։ Այլև իշխան Ալբերտոսը նոյնպէս աջողակ գիտէր վարել նկարիչ գործին պատտառի վերայ, ինչպէս նկարիչ կապարագրիչը թղթի վերայ։ Եղած է առաջարկութիւն (խօսքի յառաջերութիւն) թէ նա իւր համալսարանական ուստ մնասիրութիւնից չև-

տոյ մտադիր էր նկարել Միշողութեամբ իւր մօրաքուր արքայական աղջկայ պատկերը, և թէ նա մի քաղցր զարմացքի մէջ ընկաւ, երբ որ վերադառնալով դէպ ի իւր սենեակը հայրական ամրոցի մէջ, գտաւ այն տեղ այս պատկերը, որ նորանից յառաջ տեղ էր հասել, ծածկախորհրդաբար, մի անծանօթ ձեռքով բերուած լինելով։ Հին գերմանիայի վիպասանութիւնների մէջ կ'ասուէր սա կախարդ կանանց գործ. նոյնպէս ասելու էինք և մեք Հայերս։ Արդեօք նորա մօրաքուր արքայական դուստրն էր եղած, որ ուղարկել էր այս ծարրը, երկիւղ գրելով, մի գուցէ մոռանար նորան արքայազն Ալբերտոսը. այս բանս տակաւին մի նորանշան տեսիլ է, բայց ստոյգ և հարազատ, որ և այդ պատճառով շատ սիրելի է մանուկ անգլիական աղջիկներին, որովհետև դա նիւթ է մի հաճելի պատմութեան մի քանի պլպլութեամբը, և երբէք հարկաւոր չէր, որ այդ հաւանութիւնը հետևեցնենք այն ծնակակապի նշանի մակագրութենից. «Ցաւը դիպչի նորան, որ մտաբերելու էր մի վատ բան». Որպէս թագաւորութիւն, մի՞ թէ պիտոյ չէր թոյլ տալ, որ մի թագուհի որչափ և իցէ յառաջամտոյց լինէր, եթէ մի տղամարդ որ հաւանելի է նորան, արժանի էր այդ ուշադրութեան իւր մեծարող համեստութեամբ։

1839 թուականի վերջումը, իշխան Ալբերտոսը, քսանամեայ հասակում, և մի իշխան այնքան մասամբք կատարեալ, կրկին անգամ երևեցաւ Անգլիայի պալատում։ Նա շատ հաւանելի եղաւ թագաւորութեան պաշտօնակալների աչքում, նոյնքան և Վինդսօրեան ամրոցի ընտանեկան ժողովների մէջ։ Այդ տեղ ահա սկսանում միւսանգամ ստոյգ պատմութիւնը սիրոյ։ Երիտասարդ թագուհին և իշխան Ալբերտոսը հանդիսադիր էին մի կադրիլեան խաղի մէջ, բայց որովհետև իշխանը պիտի կէս մի լինէր այնքան համարձակախօս կամ համարձակահայեաց, որ թագուհին պատասխանէր նորան, և կէս մի հարկաւոր էր քաջալերել նորա ամօթխածութիւնը, նորին մեծութիւնը, Վիքտորիան, որին Ալբերտոսը յետ էր տարել դէպ ի նորա նստարանը, տուեց նորան իւր ծաղկափունջը։ Իշխանը, սիրտը շարժուած և շնորհակալ, դողդողով պոռոքէ իւր ֆրուէը, որ ծաղկափունջը դնէ իւր սրտի վերայ։ Այս դաշնակը երևելու էր միտքը ինչ տարապայման, բայց դա իսկապէս էր մի կտրոց կամ թէ ծոցի դանակ [1]։ Բաց ի այս երկբայական ման-*

[1]) *Մի կամ երկու օր յառաջ, իշխանը յայտնուէր թագուհուն իւր սրտի շնորհակալութիւնը այն ընդունելութեան վերաբերեալ, որ նա գտել էր Անգլիայում։ «Իմ քեռի, ասաց նորան թագուհին, եթէ դուք այնքան հաւան էք այս աշխարհին, անեծք արդեօք պատճառ ընդդէմ ձեր ուուն ու տեղ հաստատելուն այս տեղ։ «Ամենևին ոչինչ» պատասխանել էր նորան իշխանը, դեռ ևս չհամարձակելով աւելի քնքուշ սիրախորհուրդ սալ այն հարցմանը։ Վերջապէս ծաղկեփունջը ամենևին պայծառապէս մեկնեց նորան բանի իմաստը։ Ծաղկափունջը դնելու անմիջապար իւր սրտի վերայ, պիտոյ էր միայն Ալբերտոսին բանալ կոճակները իւր պլեստի որ առաջևից փակ էր մինչև վիզը, և սրտանով բացայայտումն հարկաւորութիւնը գործ դնելու ծոցի դանակը, բայց դաշնակի գործադրութիւնը երևումն մի տարապայման իրողութիւն և պիտի համարուի թագուհանոցների սխալանք։*

բամասնութենից, սիրոյ բացասնութեան հանդէսը ընդհանրապէս ընդունուած է որպէս ստուգութեամբ եղած։ Ասա՛, մեք կարդացինք երեկեան օրը մի սեւապատ ազգարարութեան մէջ, որ մի այլ ծաղկափունջ, քան երկու տարի յետոյ նոյն արքայական ձեռքով ուղարկուած, գրուել է իշխանի դագաղի վերայ, յառաջ քան թէ փակուած էր գերեզմանական վէրապը սուրբ Գէորգի նորանի։

Վերադառնանք դէպ ի 1839 Թուականը։ Նոյեմբեր ամիսը դեռ ևս չվերջացած, Վիկտորիա Թագուհին ժողովից գաղտնի խորհրդականքը, որ յայտնէ նոցա մի առանձին խնդիր։ Նա վեր կալաւ խօսքը և հաստատ ձայնով խօսեց այսպէս. «Ես պատուիրել եմ ժողովել ձեզ այս տեղ, պարոններ, որ ձեզ իմաց տամ իմ որոշումը մի գործի մէջ, որ մեծապէս պատկանում իմ ազգի բաղդաւորութեանը և իմ կեանքի երջանկութեանը։ Ամսինքն ես դիտաւորութիւն ունիմ զուգաւորուիլ ամուսնութեամբ Սաքսեն-Գոթուրգի և Գոթայի իշխան Ալբերտոսի հետ։ Քաջ վերահասու լինելով այն հանդիսաւոր պարտականութեանը որ ես ահա պիտի յանձն առնում, որչափ եմ ես պատրաստ որոշումն ոչ առանց հասուն խորհրդածութեան և ոչ իսկ առանց իմ սրտի ամուր վկայութեան, թէ Աստուծոյ ամենակարողի ողորմութեամբ, դա միանգամայն կ'ապահովէ իմ ընտանեկան բաղդաւորութիւնը և կը սպասաւորէ իմ աշխարհի օգուտներին»։

Ոչ մի նախարար, ոչ մի անդամ գաղտնի խորհրդարանի յառաջ չբերեց և ոչ ամենաւիքը ընդդէմ խօսք։ Ինչպէս երևումէր, նոյնպէս հակառակութիւն ցոյց չտուեցին և երկու ազգային խորհրդարանների անդամքը։ Երբ որ 1840 Թուականի Յունուարի 16 ին, Թագուհին իմաց տուեց իւր ամուսնութիւնը այն արքայական ճառի մէջ, որ տակաւին կարող էր չհամարուիլ նորին մեծութեան անձնական մտածութեան յայտարարը — բայց այսօր կարող ենք ասել, այսօր, երբ ահա աւելի քան թէ քսան տարի, անխռով բաղդաւորութեամբ անցած Թագուհու համար, և ազնուասէր կառավարութեամբ իւր ազգի համար, ապացուցել են, որ Թագուհին կարողացած լինելու չէր առնել աւելի լաւ ընտրութիւն — դուրս երևեցան մի քանի երկմտութիւնք և աւելի քան թէ մի հինօրեայ փորձառու սպասաւոր անգլիական միապետութեան դժուարանումէր հաւատալ, թէ մի ամուսնութիւն, սրտի ձգտողութենից յառաջացած, կարող կը լինէր միաբանութիւն սահմանադրական Թագաւորութեան պարտականութիւնների հետ։ Մխսերը յառաջ էին ըերում թէ նոքա երկմիտ էին միայն մի քանամեայ իշխանազնի մանկութենից, և տարակոյս ունէին, արդեօք իսկ՛ եմ գործ էր Թագուհու կողմից, թէ որպէս կին մարդ և թէ որպէս ծայրագոյն իշխանուհի այդքան միամիտ լինել ապագայի մասին, կենակցութեամբ մի ամուսին տղամարդի հետ, որ երեք ամիս միայն աւելի հասակաւոր էր նորանից։ Պարլամենտի ընդդիմութիւնը կարող չէր ամենևին բարձրաձայն բացայայտել իւր տարակու-

սանքը։ Լօռդերի խորհրդարանի մէջ, հակառակ կողմը բաւականացաւ միայն դուքս Վելլինգտօնի բերանով դանգատել, Թէ Թագուհին հրատարակել չէր Թէ իւր ընտրած ամուսնակիցը խոստովանուած այն կրօնը որ սահմանադրութիւնը պարտք է դնում Թագաւորող իշխանատոհմի վերայ։ Կարելի էր ղարմանալ, որ հազարապետը խօսուեր այս դիպուածի մէջ որպէս մի եպիսկոպոս. «Գիտեմ ես, ասուեր նա, որ իշխան Ալբերտոսը պրօտեստանտ է. գիտեմ ես որ պրօտեստանտականութիւնը է նորա ազգատոհմի և իւր կրօնը. ես գիտեմ այդ բանը, որովհետև ծանօթ եմ Քօբուրգեան տան անդամներից շատերին, բայց ազգը կարօտ էր և կը ցանկանար իմանալ այդ բանը վաւերապէս, և այդ ծանօթարարութիւնը պիտի եղած լինէր վաւերական կերպով, երբ որ խորհրդարանի մէջ քննութիւն էր եղած այդ մասին։ Ինչ պատճառով նախարարները անփոյթ են արել այդ ծանօթարարութիւնը, ինչու համար նորա երկբայել են բարձրաձայն հրատարակել իշխանի դաւանած կրօնը»։ Դուքս Վելլինգտօնին պատասխանեցին նախարարքը այնպիսի բացատրութեամբ որ պիտի բաւական լինէին։ Բայց դուքսը այնու ամենայնիւ առաջարկեց մի յաւելուած Լօռդերի խորհրդարանի տուած Թղթի վերայ, որ և ընդունվեցաւ, կառավարութեան ակամայ Թեամբ։

Ժողովրդի խորհրդարանում, հակառակ կողմը յառաջ բերեց մի ընդդիմախօսութիւն արծաթի մասին. ասուեին շատ կամաց և արհամարհական դէմքով, Թէ աշխարհի ամենահարուստ Թագաւորութեան Թագուհին ամուսնակից է ընտրում իւրեան մի իշխան, որ չէր բերում իւր հետ ամուսնական ընկերութեան համար և ոչ իսկ այնքան եկամուտք, որ հաւասարուէր մի աղնուականի կրտսեր որդու եկամուտքին, մի իշխան առանց իշխանութեան, առանց հայրենական կալուածի։ Այդ մի վհհանձն գործ էր Թագուհու կողմից և նորա արքունական հասցէքը Թոյլ էին տալիս նորան այդպէս ընթանալ. բայց ինչ հարկաւոր էր պահանջել աղդից իւր ամուսնի տղամարդի համար մի տարեկան բաժինք 50,000 լիտր ստերլինգ, ստանալի, քանի որ նա կենդանի էր։ Տօրեանքը (Թագաւորակողմեանքը) և Բադիկալները միաբանուել էին պաշտպանելու ազդի քսակը և պահանջելու, որ տարեկան բաժինքը փոքրացնուի մինչև երկու հինգերորդ մասը, այսինքն 20,000 լիտր ստերլինգ։ «Եւ այդ չափը դեռ ևս լինելու էր գուցէ շատ ու շատ, ասաց չարութեամբ Զօզեֆ Իւմը, մի երիտասարդի համար, որ ստվոր չէ ապրելու այնքան մեծատնաբար։ Այդ լինելու էր, նորան անկախ կացուցանել իւր կնոջից, այդքան արծաթ դնելով նորա ծոցը, և առանց ապահովելու նորին մեծութեան բաղդաւորութիւնը, գուցէ Թէ պիտի մեծապէս վտանգէինք նորան։ Լօռդ Ջօն Րօսսելը յիշեցնելով հակառակորդներին իւրեանց ակնածութեան պարտականութիւնը դէպ ի Թագուհին, որին ընդդէմ էր փոքրացնել որոշած բաժինքը արքայական ամուսնակցի համար. այլև, նորա կարծիքով, այդ բանը նպատակ ևս ցուցանուեր Տօ-

րեանց դժկամակութիւնը, որքան Բադիկալների անբարեացակամութիւնը — պնուհետև սըր Րօբերտ Պիլը ախոյեան դուրս եկաւ ընդդէմ լօրդ Ջօն Րօսսելին։ Ազատամտութեամբ մի թագաւորութենական տղամարդի, որ երբէք շտապած չէր նախարար լինել, որ և երբ ինքը նախարար էր (այս պարծանքը իրաւացի է) ցուցել է իւր անձը այն Տօրի, բայց աւելի սակաւ պալատական ճոյ քան թէ ուզքը (ժողովրդակողմանքը), հանդէս տուեց իւր խօսքին պսպղէս. «Ջօն Րօսսելի բանախօսութիւնը համեմատ չէ պարլամենտական կարգին. նա դժկամակութիւն է համարում մի ձայն, որ է սրտի խորհած ու կշռած վկայութեան յայտարարութիւն։ Արդարև, առանց տարակուսի, մեր աշխարհը այնքան հարուստ է, որ կարող է ճոխ բաժինք տալ իւր թագուհու ամուսնակից տղամարդին, բայց մեր աշխարհը կը տայ այնքան, որքան կամի։ Թող իմ կարծիքս անհաւանելի լինի, այդ կարելի է. բայց այս մեր աշխարհն է, որ մեք իբրև փոխանորդք պատկերացնում ենք այս տեղ, և մեր պարտականութիւնն է յայտնի կացուցանել նորա կարծիքը»։ Գրեթէ նոյնպիսի խօսքերով սըր Ջէմս Գրահամը զօրութիւն տուեց մի արծաթաքանակի որ էր 30,000 լիտր ստերլինգ, որ ընդունվեցաւ [1]։

Այս քննողական վիճաբանութիւնը ամենևին լուսաւիսլ է կացուցանում պարլամենտական կառավարութեան ազատութիւնքը, ուր թոյլտուած է չափաւորել իւր ունեցած վստահութիւնը դէպ իւր իշխանքը, որ տակաւին շատ երիտասարդ էին, քան թէ կարող էին վկայութեամբ հաստատած լինել իւրեանց իմաստութիւնը։ Արդարև, Վիքտօրիա թագուհին և իշխան Ալբերտոսը նոյնքան ևս զգուշանալու էին դէպ ի չարը գործ դնել 30,000 լիտր ստերլինգի բաժինքը, որչափ 30,000 ի բաժինքը, բայց պարլամենտի միջական իմանալութիւնը ոչինչ խափան վերաւ նոցա, ցոյց տալու թէ ամենևին անհիմն և աւելորդ էին այն երկմտութիւնքը որ յայտնուել էին կրկնապատիկ ընդդիմութեամբ Բադիկալների և Տօրեանց։

---

[1]) Իշխան Ալբերտոսը ժառանգել էր մի հայրենական ստացուած իւր մօրից, որ տալիս էր մօտ 50,000 ֆրանկ եկամուտք։ Բայց երբ որ նորա ամուսնութիւնը թագուհու հետ հրատարակուեցաւ հանդիսաբար, նա թոդ տուեց իւր բոլոր գոյքը իւր եղբօրը, յաւելցնելով գործ վերայ այն պայմանը, որ դորանից որոշուէին երկու կամ երեք տարեկան թոշակք գերդաստանի հին ապրուստներուն համար, քանի որ դոքա կենդանի էին։ Ուրեմն իշխանի չէտոպոլինէնը էր բոլորովին կամաւոր և պատիւ էր բերում նորա ազնուամտութեանը։

Պ. Ջոզէֆ Խումը առաջարկել էր քանակութիւս 21,000 լիտր ստերլինգ, բայց նորա առաջարկութիւնը մերժեցաւ մի մեծ առաւելութիւն բազմութեան կողմից։ Սիթօրպ գնդապետան եղաւ, որ առաջարկեց քանակութիւս 30,000 լիտր ստերլինգ որ և 262 մարդ ձայներով ընդդէմ 158 հակառակ ձայների ընդունվեցաւ։ Այս գնդապետը, մի հին, չափից դուրս պահպանաւեր (ultra-conservateur) մարդ, պարծենումէր թէ իւր ոտքը երբէք դրած չէ ապակեղէն ապրանքի մէջ, որ նորա աչքում էր մի բաբեղենեան աշխարհակ, ուր օտարականների համաժողովումը, յառաջադիմութեան պատճառանքով, նորագումէր լեզուների խառնակութիւնը։

Պսակը օրհնուեցաւ սուրբ Յակոբի պալատական խորանի մէջ, որ լինելով մի հին ապարանք, սպասաւորում միայն անգլիական թագաւորների հանդիսաւոր տօնախմբութիւններին։ Այս տօնախմբութեան փառահեղութիւնը էր միայն արտաքին պսակը (encadrement, рама) կրօնական արարողութեան, որովհետև քրիստոնէական եկեղեցին, կաթոլիկեանը կամ պրօտեստականը չունէր ոչինչ յաւելուած առնելու խորհրդի ձևի վերայ, թագադրդ գլուխների համար։ Օրհնած մատանին նշանադրածներին տալուց յառաջ, ամենախոնարհ աթոռակալը թեմի պիտոյ է որպէս անգլիական եկեղեցիների գահերէց և քանտերբուրիու արքեպիսկոպոս հարցանէր իշխանից. «Ալբերտ, կամիս դու առնուլ քեզ ամուսնակից այս կինս, որ ապրես նորա հետ ամուսնութեան սուրբ վիճակի մէջ, ըստ օրէնքին Աստուծոյ։ Յանձնառու ես դու սիրել նորան, պատուել նորան, խնամել նորան թէ հիւանդութեան և թէ առողջութեան օրերում, և ապրել միայն նորա համար, ինչքան որ դուք երկուքդ կենդանի էք»։ Եւ թագուհուց այսպէս. «Վիկտորիա, կամիս դու առնուլ Ալբերտոսը քեզ ամուսնակից, որ ապրես նորա հետ ամուսնութեան սուրբ վիճակի մէջ, ըստ օրէնքին Աստուծոյ։ Յանձնառու ես դու հնազանդել նորան, յարգել նորան, սիրել նորան, պատուել նորան, խնամել նորան հիւանդութեան և առողջութեան օրերում, և ապրել միայն նորա համար, քանի որ դուք երկուքդ կենդանի էք»։ Նուիրական ծէսն և ջնջուած էր արտասանեցին նոյն և մի վստահութեամբ երկոքին օգոստափառ ամուսնակիցքը, արքայական խորանի մէջ 1840 թուականի փետրուարի 10 ին. — փոխադարձ հաւանութեան առաւել ճոխացրած ձևը նոյն հոգեշարժութեամբ և նոյն փառահեղ շնչոտութեամբ արտասանուեցաւ երեք թագաւորութիւնների գերագոյն պաշտօնատարների առաջև, որ էին հանդիսաւոր վկայք այս արարողութեան։ Կարելի էր նկատել վելլինգտօն դուքսի բացակայութիւնը, բայց դա յառաջացել էր, ինչպէս հաւանական է, մի անակնկալելի արգելքից, Դուքսը արդէն մօտևորուած էր խորհրդով արքայազն Ալբերտոսի հետ։ Նա երբէք դադարել չէ յարգել տոհան, թէև ոչ միշտ եղած է նորան համակարծիք, և ամբողջ տասն տարի տակաւին յօժարութեամբ դասակից է եղել նոցա որ կամակորութեամբ աշխատել էին արքայազն Ալբերտոսը փակել ու կաշկանդել այն նեղ իշխան-ամուսնական արտօնութեան մէջ, որ էր մանաւանդ — ինչպէս ասումէր ալևոր դուքսը — բաղդաւորել թագուհու ընտանեկան կեանքը։

Ամուսնութեան վերայ չորս ամիս անցած, իշխան Ալբերտոսին մի տրխուր դէպք պատճառ տուեց հանդիսացնելու իւր անձնանուէր սէրը դէպ ի իւր արքայական կողակիցը։ Յունիսի 11 ին, երկու ամուսնակիցքը դուրս էին գնացել զբօսանք առնելու կառքով։ միևը այն իսկացնորներից, որ հիւանդացած էր արքայասպանութեան մոլութեամբ, որ մի քանի միջոց հաստարակուած էր Ֆրանսիայում մանաւանդ, դարան է գործում նոցա, զբա-

հաւորուած մի փոքրիկ հրացանով։ Նա արձակեց առաջին հարուածը թագուհու վերայ և տեսանելով որ անյաջող էր գտնուել, արձակեց նա երկրորդ հարուածը, որ վերաւորած կը լինէր իշխանին, եթէ խելագարը ուղիղ դիպեցուցած լինէր հարուածը. պատճառ, իշխանը միջոց էր ունեցել խեթիկել թագուհին դէպ ի կառքի խորքը և տեղաւորուիլ նորա ոտ սպանողի մէջ տեղ։ Մի այդպիսի չարագործութեան համբաւ զայրացրեց Անգլիան և ամենայն կողմից յայտնեցին իշխան Ալբերտոսին մի երախտագիտութիւն որ նոյնչափ և շարժեց նորա դուխը, որչափ այն քնքուշ սիրոյ արտասուքը, որ թագուհին, ուշը վերան եկած, թափել էր դրկախառնելով նորան։

Այս դէպքը, որի մի մասը շատ հրապարակուել էր, ըստ բաւականին վկայում երիտասարդ ամուսնակիցների խորին սրտակցութիւնը։ Պալատի ժամանակագրութիւնը կարող չէ երաշխաւորել նոյնպիսի վաւերականութեամբ մի այլ անցք, որ պատմութեան նիւթ էր դարձել բոլոր օրագրութիւնների համար։ Թագուհու շրջակայքում եղած պատուելի երիտասարդու հին, որ պիտոյ է այդ անցքին վկայ կամ խորհրդապահ եղած լինի, ասել չէ թէ ինչ քրիմնջանքի պատճառ ունէր մի երեկոյ իշխան Ալբերտոսը, որ հեռացաւ և վակուեցաւ իւր սենեակի մէջ, ինչպէս երիտասարդ ամուսին այրը ֆրանսիական օպերայի «Ադոլֆ և Քլարա»։ Արդարև թագուհին անիրաւ էր գտանուել մոռանալով ամուսնութեան սուրբ խորհուրդը և մտաբերելով միայն իւր քաղաքական իրաւունքը։ Որոշելով իւր մէջ, որ թոյլ չտայ իշխանին քրիմնջանքի մէջ անցուցանել ժամանակը մինչև գալոց օրը, թագուհին աւելի ձեռնտու համարեց նպաստ առնուլ իւր սահմանադրական իրաւունքը, դարձուցանելու իւր մտ իշխանը։ Նա անձամբ անձին գնաց թակելու նորա դուռը. «Այդ ո՛վ է, հարցանումէ իշխանը։ — Այդ քո թագուհին է, հպարտութեամբ պատասխանումէ Նորին մեծութիւնը։ — Ուրեմն թո՛ղ բարեհաճի թագուհին ներել ինձ, պատասխանեց ապստամբը. ես ցանկանումեմ միայնակ լինել։ — Ալբերտ, այդ ես եմ, քո կինը, ասաց մի աւելի հեզ ձայն. խնդրումեմ բանալ դուռը»։ Դուռը իսկոյն բացուեցաւ և հաշտութիւնը վերանորոգվեցաւ այնպէս շուտով ղկնի խռովութեան, որ նոյն իսկ օրին մանրակրկիտ դուքս Վելլինգտոնը չունէր տեղիք յանդիմանելու իշխանին, որպէս թէ նա չէր լցուցել իւր բոլոր պարտականութիւնքը դէպ ի թագուհին։

Տօրեանքը և բադիկալները չէին յուսացել, որ թագուհին լինելու էր ինն զաւակների մայր, որպէս ղն նոքա խոստովանէին թէ իշխան Ալբերտոսը հաւատարմութեամբ լցուցել էր իւր բոլոր պարտականութիւնքը որպէս ամուսին այր և որպէս հայր։ Բայց պիտոյ էր միայն ոչ պակաս, քան թէ տասն տարի, որ խոստովանէին, թէ նա ունէր նոյնպէս իշխանական արժանաւորութիւնը ընտանեկան շրջանից դուրս։ Այո՛, այն ժողովրդասիրութիւնը, այնքան լուսաւոյլ դուրս երևելով նորա մահուան նախընթաց ե-

րեկոյին, դեռ ևս երկբայութեան տակ էր — և ահա եղաւ նա առաջին կեր-պարանագործողը համաշխարհական յանդիմանութեան (exposition universelle, всемірная выставка) *գաղափարի։ Եթէ նա չէր դորա միայնակ յա-ռաջ տանողը, այո՛ անտարակոյս նա էր, որ նորան տարաւ հասցրեց մի յա-ջող վախճանի, թէպէտ այդ գործին հակառակ էին երևելի և մեծակշիռ մարդիկ, որոնց մէջ կար նոյնպէս դուքս Վելլինգտոնը, որ եթէ չէր ուղղա-կի ընդդէմ, գոնեայ չէր քաջալերում ոչինչ կերպով, այլ ամեն լսողի կըր-կնումէր, թէ այդ ձեռնարկութիւնը չէ պակուելու յաջողութեամբ։ Բայց այդ գործի յաջողութիւնը պատրաստեց իշխան Ալբերտոսին մի ճշմարիտ թագաւորութիւն արուեստների սահմանի մէջ, տալով այդ խօսքին մի ամեն-ընդարձակ միտք, որ նոյնպէս իսկ պարունակում իւր մէջ վաստակասիրական արուեստքը, որպէս գեղեցիկ արուեստքը յատկապէս։ 1851 Թուականի հա-մաշխարհական յանդիմանութեան ապրեցութիւնը կը ստուգուի և կը հաս-տատուի 1862 Թուականի յանդիմանութեամբ, որ պիտի բացուէր մի և նոյն ակնարկութեան տակ. բայց յառաջադիմութիւնը, որի մասին անգլիական վաստակասիրութիւնը պարտական է շնորհակալ լինել իշխան Ալբերտոսի ժրագլխութեանը, վկայումեն արդէն և քննող ճանապարհորդները որ ամե-նայն տարի պցելութիւն առնելով Անգլիային, համեմատել էին այն տեղ այժմեան խանութների մէջ դուրս դրած ապրանքը այն տարիների խանութ-ների դուրս դրած ապրանքի հետ, որ յառաջընթաց էին տասնամեայ միջո-ցով, սկսեալ 1851 Թուականից։ Արդարացատ լինինք. ճաշակի մասին, Անգլիան արդարև աւելի պարտական է Ֆրանսիային քան Թէ Ֆրանսիան Անգլիային. բայց Ֆրանսիայի մանուֆակտուրատարքը և արուեստագէտքը ստացել են նոյնպէս ինչ ինչ օգտակար խրատք և դաստիարակութիւնք ա-պակեշէն ապրանքներումը։ Ուրեմն պատիւ և շնորհակալութիւն իշխան Ալ-բերտոսին։*

Ասպէս է անգլիական քաղաքավարութեան, աւանդութեամբ հաս-տատուած նախանձոտութիւնը, որ Վիքտորիայի ամուսնակից իշխանը ինչ-քան աւելի աջողակութիւն էր ցոյց տալիս ամենայն բանի մէջ, դուրս չհա-նելով դորանից և կառավարութեան գիտութիւնը, նոյնքան աւելի աշխա-տումէին Անգլեացիք փակել նորան իւր արուեստասիրական մասնաւորու-թեան մէջ։ Նորան պարտաւորեցին մի օր, լինժողով Պարլամենտի բազ-մութեան մէջ, Թէ նա յափշտակել է նախարարական իրաւունք, որովհե-տև ներկայ էր գտնվում գաղտնի խորհրդակցութիւնների, որովհետև նորան մասնակից էին կացուցանում թագաւորութեան թղթերին և եկաւոր լուր-բին, օրովհետև վերջապէս, նա համարձակվում էր անդադար խորհրդակից լինել թագուհու հետ։ Լօրդ Աբերդինը, որ այն ժամանակ առաջին մի-նիստր էր, թոյլ տուեց այդ իրողութիւնը և արդարացրեց դորան, որպէս կարող էր։ Սոյն իսկ պաշտպանութիւնը բացայայտ կացուց իշխանին, որ նո-

րան պարտ էր, եթէ ոչ լուել, գոնեայ ամենայն զգուշութեամբ թագուցանել իւր պնդունը քաղաքավարութեան վերաբերեալ կարծիքների մէջ։ Ծանր պիտի եղած լինի նորա սրտի համար, որ չունէր համարձակութիւն ինքնին պաշտպանել իւր դատը խորհրդարանների մէջ, որովհետև նա խօսումէր ընտիր ոճով, որին վկայ են նորա հատաքածոյ ճառատացութիւնքը երկրագործական և վաստակասիրական ժողովների մէջ, հանդիսաւորութիւնների, ուր նախապահութիւնը ընծայած էր նորան, և բաց ի միւս տեղերից, երբ որ նա նախաձոռ էր Բրիտանական ընկերութեան մէջ. բայց նա կարողացաւ զսպել իւր անձը մինչև առաջին ձախորդութիւնքը Ղրիմեան պատերազմի։ Մեր ընթերցողները կը մոռանան, որ նա համարձակուեցաւ բառականարձրաձայն ողբալ Անգլիայի զինուորական նուաստութիւնը, համեմատելով Ֆրանսիայի հետ, և դորա պատճառը ընծայել Պարլամենտի ինքնիշխան առաջնորդութեանը։ Ահա մի հատ դիպուածն է, որի մէջ Ալբերտոս իշխանը աղգային անձնասիրութեամբ և հայրենասիրութեամբ ցոյց տուաւ իւր անձը ոչ այնքան վհհանձն, ինչպէս նա էր ստուգութեամբ [1]։ Ծուեցին և թիւրեցին նորա դիտաւորութիւնքը, պարտաւորելով նորան իրրև համախոհ Ա. տորիայի. այլև մինչև անգամ աստ մէջ թէ նա իւր գրաւոր հաղորդակցութիւնների մէջ օտար պալատների հետ, երբեմն մոռանալէ թագաւորութեան գաղտնիքը։ Ահա մեղադրութիւնների չափազանցութիւնը հեշտ էր կացուցանում հերքել նորանց. բայց արդէն մի ցաւալի կացութիւն էր, այսպիսի կերպով կասկածանքի տակ ձգուած լինել, թող նա պարծենար թէ ամենայն բարեխղճութեամբ ուսումնասիրել էր սահմանադրական կարգերը իւր որդեգրող հայրենիքի, առաջնորդ ընտրելով իւրեան Դելօլմ, Հալլամ, Բլաքստօն, Բենթամ և Միլլ մատենագիրքը, այլև իրաւագէտ Մ. Սեյմուինը, որին առել էր իւր ուսուցիչ անմիջապէս գինի իւր ամուսնութեան, առանց սպասելու, որ մեղրահաս ամիսը (առաջին շաբաթները նորափեսայութեան) անցանէր։ Հակառակախօսութիւնքը այնքան թեթև ապին բան են ընդդէմ բաժիններին, որ մի չափազանցութեամբ դէպ ի ներհակ կողմը, ասել են յետոյ, թէ իշխանը ուղեկից լինելով թագուհուն դէպ ի Ֆրանսիա, պցելութիւն առնէլու Նապօլէոն երրորդին, և կայսրի բարեկամասիրութեամբ քաջալերուած, մի օր պնդեց նորա առաջև անգլիական սահմանադրութեան գերազանցու-

---

[1]) Ամենևին սխալմամբ այս ճառի հեղինակը, թեթևամիտ գաղտնութեամբ պահանջելով իշխան Ալբերտոսից, որ նա չգիտեմ թէ ինչ խոհեմ վհհանձնութեամբ փակեր Անգլիացւոց աչքը նոցա զինուորական նուաստութեան վերայ. «Ո՛չ ապաքէն այն թշուառութիւնքը որ հասան անգլիական զօրքին ղրիմեան պատերազմում, արդարացուցին և իրաւացուցին Ալբերտոսի նախատես տարակուսանքը։ Ահա ղրիմեան պատերազմում փառաւորեցաւ Ֆրանսիա, բայց և նախատուեցաւ անգլիական զօրքի պատիւը. և այդ բանը լինելու չէր, եթէ Անգլիան, հանգանալով իւր տկարութիւնը, չխառնուէր պատերազմի մէջ, և չմերկացներ իւր տկարութիւնը իւր քաջ և զօրեղ ընկերի, Ֆրանսիոյ առաջև։ Բայց խորամանկ Լուդովիկոս Նապօլէոնը ցանկանում էր և դորան խափա-

Թիւնը և առաւելութիւնը բոլոր սահմանադրու թիւններից և թէ այնպէս լաւ խօսեց, որ կայսրը յայտնեց նորան թէ իւր դիտաւորու թիւնն էր այդ օրի-նակով, ինչքան կարելի է շուտով, կատարելագործել իւր կայսերական կա-ռավարութեան կարգը, ընդհակառակ շատ ու շատ ընդարձակ արտօնութիւնք իւր երկու օրէնսդրական խորհրդարաններին և մի աւելի պարունակ ազա-տութիւն խօսքի և քննութեան, մամլոյ հանդիսի մէջ։ Արդեօք ունէի՞նք մեք ստուգութեամբ մի պատճառ ընդհակառակութեան իշխան Ալբեր-տոսից, այն (ինչ և խօսէին) կանոնադրութիւնների համար որ տրուեցան 1860 և 1861 թուականների Նոյեմբերի ամիսներում։ ամենևին ոչ, ասում Ֆրանսիացի հեղինակը այս ճառի, ըստ որում կայսրը ոչ ոքի հետ խորհըր-դակից չէր, եթէ ոչ իւր սեփական իմաստութեան հետ, թէ ինչպէս պիտի գործ դնէր իւր, ամեն բանի սկիզբն ու պատճառ տուող հրամանի իրաւուն-քը։ Իշխան Ալբերտոսը, որքան և առ ի սրտէ սիրող էր այդ պարլամեն-տական սահմանադրութիւնների, թող այն (մի Ֆրանսիացու համար) օտա-րամիտ կարծիքը յօգուտ փոքր ինչ նեղսիրտ կառավարութեան, որ դուրս էր եկել նորա բերանից ղրիմեան պատերազմի միջոցին, կարող չէր մոռա-նալ Սէն-Կլուդ ամրոցումը, որ նա 1847 թուականին Եօ (Eu) ամրոցում եղել էր հիւր մի սահմանադրական թագաւորի, որի աթոռը կործանուել էր մի աղատ տաճնախօսական բեմի և մատենագրութեան զօրութեամբ։ Հիա-նալի՞ ակնարկութիւնք, թէ պիտոյ էր (ինչպէս արել է Նապոլէոն երրորդը) ըստեղնել տաճնախօսական բեմի և մատենագրութեան ազատութիւնը, որ այդպէս թագաւորական աթոռ ոտքի վերայ պահուէր։ Բայց մեք պիտի ա-սենք այդ ֆրանսիական վարքագրին Ալբերտոսի, եթէ Նապոլէոն երրորդի կայսերական աթոռը հիմնած է ճշմարտութեան և ստոյգ ազգային օգտի վե-րայ և ոչ թէ տգէտ ամբոխի ընտրողական քուէարկութեան, որին ասում են suffrage universelle*, կամ թէ աւելի լաւ մտքով, մի փրկութեան տախտակ համազգային նաւաբեկութեան մէջ, թող ապա ներգործէ այդ տեղ մի ազատ տաճնաբանական բեմ և մատենագրութիւն. այնուհետև կարծեմ, մի օր դիմանալու չէ դորան ամենևին խոխոտ և խաբեբայ բարոյական հիմքերի վերայ հաստատուած աթոռը Նապոլէոնի. ճշմարտութիւնը ոչ ոքի վնաս-կար չէ, եթէ ոչ բռնակալներին միայն։ Բոլոր այժմուս երևելի տղամարդիք-րը Ֆրանսիայի յուլիսեան դինաստիայի տակ են ծնած, սնած ու դաստի-արակուած, բայց Նապոլէոն երրորդի դինաստիան չէ յաւաջացուցել ոչ մի ականաւոր քանքար, և կարող ևս չէր յաւաջացնել այն երկաթի գաւազանի տակ, որի ներքոյ ամենայն խօսք քաղաքական նիւ թերի վերայ դարձել է կայ-սերական կամքի ու հրամանի կոյր սպասաւոր։ Ձենք կաշառուում և ոչ այս և այն գեղեցիկ ազատամիտ խօսքերից Նապոլէոն երրորդի, չենք հաւատում և նորա բարի դիտաւորութիւններին, որովհետև այդ բոլորը համարում ենք աւելի անձնապահպանութեան ստիպանքից յառաջացած, քան թէ ուղիղ*

և անարատ սրտից։ Ի հարկէ, Ֆրանսիացիք գտել են այն մարդը, որ այդպիսի ազգին հարկաւոր էր իսկապէս, այսինքն մի խորամանկ մարդ որ գիտէր մի ազգ նոյն ազգի ակարութեամբը որսալ ու հնազանդեցնել իւր կամքին, այսինքն մի փայլուն վառասիրութեամբ. tout pour la grande nation կուրացրել էր արդէն առաջին Նապօլէոնի ժամանակի Ֆրանսիացիք, բայց երբ որ Նապօլէոնի ձախորդութեամբը դորա բացեցին իւրեանց աչքը, այն ժամանակին յետ քարշուեցաւ վարագոյրը և տեսան, որ Նապօլէոնը պաշտել է միայն իւր անձը, հակառակ Ֆրանսիայի ազգային օգտին, թէպէտ այդ մեծ ազգի անուան քօղի տակ, pour les interets de la grande nation.

Պապա ֆրանսիական վարքագիրը, մի փոքր մեղմացած, ասես թէ կոտրուած, խօսքը յառաջ է տանում այսպէս. մեք չկամենինք այս տեղ ուրանալ անգլիական ազգի կառավարութեան ձևի օգուտները, բայց առանց այնքան հեռի գնալու, ինչքան անգլիական հեղինակ Պօպէն, որ ասումէր թէ ամենալաւ քաղաքական կարգը այն է, որ և տնտեսվումէր ամենալաւ կերպով,

For forms of government let fools contest,
What'er is best administer'd is best [1]).

(Թող խելագարները վիճեն կառավարութեան ձևերի վերայ,
Որ կառավարութիւնը աւելի լաւ տնտեսվումէր, է և աւելի լաւը).

ահաւոր փորձը մեր անհամբեր բևվօլիւցիոնների, որ մեզ մի քանի անգամ վատիցը տարել են դէպ ի վատթարը, պիտոյ է մեզ հաշտեցնէ այն փոքր ինչ ծանրաքայլ յառաջադիմութեան հետ դէպ ի ազատամիտ լաւագոյն կարգները։ Նոյն իսկ անգլիական սահմանադրութիւնը շատ անգամ ենթարկուել է արգելանքի, կերպարանագործելով իւր արմատական խորհուրդը, և նորա իմաստասէր պատմաբան, Հալլամը, որի գրուածը այնպիսի պրուշութեամբ ուսումնասիրել է իշխան Ալբերտոսը, այնպէս էր կարծում թէ մի չափազանց սաստիկ փոփոխութիւն ունի բոլոր վտանգները մի ռեվօլիւցիայի և կարող է կործանել հաւասարակշռութիւնը երեք իշխանութիւնների, որ հաստատած է իրաւունքի օրէնքի վերայ։ Այլև, եթէ արդարև իշխան Ալբերտոսը կամեցել է քննաբանել անգլիական սահմանադրութիւնը կայսր Նապօլէոն երրորդի հետ, նա պիտի գտանէր նորա մէջ մի շատ լաւ պատրաստած խօսակից անձն, որ կարող էր յառաջ բերել իւր յատուկ գրուածքը, որ պարունակումն մի ծանօթութիւն 1688 թուակ. ռեվօլիւցիայի և թագաւոր Վիլհելմոս երրորդի վերայ, մի ծանօթութիւն որ հանգուցեալ Լօրդ Մակօլէն մի օր, իւր կեցութեան միջոցին Ալբանի քաղաքում, գովումէր որպէս շատ ազատամիտ. (խօսքից մինչև գործը շատ անդունդներ

---

[1]) Essay on man, epist. III.

կան, և նապոլէոն երրորդի կեանքը լի ու լի է այդպիսի հակառակաբանութեամբք)։

1857 թուականն էր, որ Վիկտորիա թագուհին կամենալով իր ամուսնակից իշխան Ալբերտոսը նախագահ կացուցանել Գերմանիայի փոքրիկ իշխանների մէջ, շնորհեց նորան վերտառութիւնս ամուսնակից իշխան «prince consort»։ Մինչև այն ժամանակը, առանց հակառակութեան, ունեցած էր Անգլիայի մէջ երկրորդ աթոռը թագուհուց յետոյ, բայց երեք թագաւորութիւնների բոլոր դուքսերից և Պէրից յառաջ։ Նորա պատուանունները, նորա աստիճանքը և զարդանշանքը էին շատ բազմաթիւ։ Նա համեստութեամբ հրաժարուել էր յաջորդել դուքս Վելլինգտոնին իբրև ծայրագոյն հրամանատար անգլիական զօրքի, ինչպես եղած էր Գանեմարքիայի Գէորգը, Աննա թագուհու ամուսնակից իշխանը. բայց նա էր մարեջախտ, գնդապետ կարաբինեան զօրախումբի, գնդապետ Թիկնապահ զօրքի Գրենադիեռների վերայ, զօրագլուխ մեծաւոր Թնդանօթաձիգ զօրքի և այլն և այլն։ Էր նա նոյնպէս ծայրագոյն մեծաւոր անտառների վերայ և կառավարիչ Վինդսորեան ամրոցի, մեծ սենեկապետ ՊլիմուԹի, աստիճան նշաններին Ծնկակապի, Տատասկի և սուրբ Պատրիկիոսի, որի մեծ դասապետութեան էր թագուհին, պարգև դասապետ Բաղանիքի (bath) նշանին, սուրբ Միքայելի և սուրբ Գէորգի մեծ խաչերին, Այս բոլոր աստիճանքը, այս բոլոր արժանաւորութիւնքը չէին այնքան քաղցր նորա սրտին, ինչքան ու սումնական և գրականական արժանաւորութիւնքը որ շնորհած էին Ճարտարապետ իշխանին մանաւանդ, քան թէ թագուհու ամուսնակցին. զոր օրինակ նախագահ աթոռակալութիւնը կենդանաբանական ընկերութեան և պիտակործական ընկերութեան մէջ, մեծ դիւանապետութիւնը քէմբրիդջեան Համալսարանի և հասարակ վերտառութիւնը «Արդապետ քաղաքային և եկեղեցական իրաւագիտութեան (doctor in utroque)։ Բայց պիտոյ է ասել, որ նա արդարացնումէր այս արտօնութիւնքը, իր առանձին ալբբայական արժանաւորութեամբ, քան թէ իր ճառախօսութեամբք, այսինքն մի ժրագլուխ գործունէութեամբ, լինելով վարձատէր, անուցանող, այգեգործ, որ սիրումէր պարծենալ իր գաղափարական կալուածի բերքերով և այն մեդալիոններով որ ստացել էր հրապարակական արդիւնացուցութեամբք։

Ո՛չինու ամենայնիւ Իշխան Ալբերտոսը սիրումէր զարդարել իր անձը իր Ծնկակապի նշանով, առաջին պատուանշանը որ ստացել էր թագուհուց, որ և ուղարկած էր նորան դէպ ի Գոթա, ուր գնացել էր իշխանը հրաժարական ողջոյն տալու իր հայրենական Գերմանիային, պարտհանդէսի մէջ խորհրդաւոր ծաղկափունջի պարգևից յետոյ. այդ նշանի վերնագրի տառերը շինած էին գոհարներից. ողը էր նոյնպէս գոհարեղէն. այս փառաւոր ժապաւէնը (կարմիր մետաքսանիթիլ) բերել էին արքայական հարսի բաղ-

գաւոր վենսլին փոխակոմս Սորրինգտոնը և դնդապետ Գրեյը, որ նոյնպէս պատուէր էին ստացել առաջնորդել նորա վերադարձին դէպ ի Անգլիա։

Իշխան Ալբերտոսը միշտ ցոյց է տուել իւր անձը իբրև ջերմեռանդ հոգաբարձու ժողովրդի կրթութեան։ Նորա պաշտպանութիւնը յառաջամատոյց կերպով հասանութեր բոլոր անձներին որ պարապած էին այդ գործով։ Այս պաշտպանութիւնը ոչ թէ միայն մեծարութեր ուսուցիչքը և դաստիարակիչքը ազգի, այլև ուղղակի քաջալերութեր բոլոր մանուկ քանքարները, որ ցուցանութեին աջողակութիւն։ Ցիշումն շատ ու շատ որը աղքատ տղայք, որ դարձել էին ականաւոր երաժիշտք, նկարիչք կամ արուեստաւորք այնպիսի վարժապետների դաստիարակութեամբ, որոց հատուցումը վճարութեր ինքը իշխան ամուսնակիցը։

Բնական է, որ Ալբերտոսի առաջին հոգածութիւնքը պատկանութեին իւր յատուկ զաւակներին, և արդիւնաբերութիւնը որով նա ստացել է թագուհու հպատակների միաբերան գովասանութիւնը, այն է, որ նա հասուցել է արքայական տոհմի իշխաններին և իշխանուհիներին, անձամբ անձին առաջնորդելով նոցա դաստիարակութեանը։ Վալլիսեան Իշխանը կարող կը լինի մխիթարել Անգլիան այն կորուստի մասին, որ հասել է նորան այդպէս կանուխ, այլև փոխարէն տալ այդ կորստին — ասումն և կրկնումն — երբ արդէն չկար Ալբերտոս իշխանը։ Շնորհակալութիւն նորա հօրը դարձեալ, որ եղել է աջողակ կառավարիչ և անտես այն եկամուտքին, որ որոշած էին թագաժառանգի համար, որ և դառնալով չափահաս գալոց տարութեան, ունենալու է իւր իշխանութեան տակ ոչ թէ մի եկամուտ 30,000 լիւր ստերլինգի, այլև յստակ արծաթով 500,000 լիւր ստերլինգ որ դարձել են նոյնպէս մի արծաթագլուխ, շահեցնուելով նորա կրտսերութեան տարիներում։ Այն փորձութիւնքը որ կարող էր յառաջացնել մի այդպիսի հարստութիւն, կարօտ են հայրական օրինակի բուռանդակ հակակշռին. պատճառ, մինչև այժմ Վալլիսեան իշխանքը և Գէորգ Չորրորդը, յետինս աւելի քան թէ բոլոր միւսերը թողել են իւրեանց յաջորդին տուր օրինակներ. լինելով չափից դուրս շռայլ իշխաններ, առնելով ամօթալի պարտքեր և անարգելով իւրեանց պատիւը, անդադար նոր ի նոր մուրացկանութեամբ պարլամենտի մէջ։ Բայց Անգլիան յոյս ունի, որ Ալբերտոսի և Վիքտորիայի որդին ընթացակից կը լինի իւր հօրը, որ իրաւացի մի և նոյն գովասանութեան նիւթ են այն ճառի մէջ, որ մեք կարդացինք իշխանի թաղման օրին, Անգլիայի առաւել հասարակաւած օրագրի մէջ. ահա նորա բովանդակութիւնը. «Մի ժամանակամիջոցում, երբ ծախքերը անհամեմատ կերպով բազմացել են ընկերութեան բոլոր կարգերի մէջ. երբ օգտակարիչ ձեռնարկութիւնքը ստացել են մի այնքան լայն ու արձակ շարժողութիւն, երբ ղեղխութիւնը գարձել է հպարտութեան լծակից յատկութիւն, երբ հասարակաց գանձի վերայ շատ անգամ յարձակուելով կողոպտել էին, Անգլիայի

արքայական տոհմը իմաստութեամբ կարողացել է միաբանել միմեանց հետ անտեսութիւնը և իւր արժանաւորութիւնը։ Փոխանակ երևելու Պարլամենտի առաջև հատուցանելի պարտքի մուրհակների բազմութեամբ. փոխանակ ազգի ուսերի վերայ դնելու ծախքը իւր բազմաթիւ զաւակների դաստիարակութեան կամ թէ հաճոյքը մի նոր ապարանք կառուցանելու, Թագուհին և իշխան Ալբերտոսը ծախք են արել ինքեանք իւրեանց քսակից, այլև ուրիշների համար։ Սոլի, ժանտախտի և պատերազմի տարիներում, նոքա իւրեանց կողմից վճարել են հարկերի աւելորդը. նոքա վճարել են այն հարկերը որ արքայական տոհմի այս կամ այն անդամը արել էին թէ դուրսումը և թէ ներսումը. նոքա արծաթով ստացել են երկու կալուածք և իւրեանց ծախքով կառուցել են երկու ապարանք, որ գրեթէ հարկաւոր էին արքայական արժանաւորութեան և աշխարհի նոր պայմաններին։ Նոքա ծայրէ ծայր շրջել են իւրեանց թագաւորութեան, գաւառների և կղզիների մէջ, աւելի քան թէ որ և իցէ իշխան առաջին օրերում, այնպիսի ժամանակներում ևս, երբ թափառումէին թագաւորները, իւրեանց գին դրած գլուխը թագուցանելու համար։ Նոքա ամեն տեղ ցոյց են տուել իւրեանց անձը և քաջալերել են ճարտարութիւնքը իւրեանց պարգևներով։ Եթէ այս մեր, միլիոնաւորների դարում, բարձրացած գինը հրապարակական սակարկութեան նիւթերի, արգելք է եղել նոցա շինել իւրեանց համար մի սեփական դահլիճ պատկերների, դորա փոխանակ նոքա ջանադիր են եղած մանաւանդ ընծաներով ճոխացնել Լոնդոնը մի ազգային պատկերասրահ դահլիճով, որ արդարև գերազանց է առաւել հարուստ մեծատուների դահլիճից»։

Մի լուսաւոր պաշտպանութիւն շատ աւելի ձեռնտու է ճարտարութիւնների յառաջադիմութեանը քան թէ մի հարուստ պաշտպանութիւն։ Իշխան Ալբերտոսը ունէր միայն մի թոշակ 30,000 լիտր ստերլինգ, բայց նա ունէր զգացողութիւնը գնդեցկի, և նոյն ինքն պ. Ինգրէսը չէ աւելի ջերմեռանդ պատուող ու մեծարող Բաւիայելի, քան թէ եղած է իշխան Ալբերտոսը։ Նա թողել է մի առանձին հաւաքածոյ որ վկայութեամբ հաստատում այդ բանը։ Նա ունէր Եւրոպայի գլխաւոր քաղաքներում գործակատարներ, որոնց յանձնած էր հաւաքել նորա համար ամենայն բան, որ կարող էր ձեռնտու լինել լուսաւիայլ կացուցանելու այդ անմահ ճարտարապետի գործերի պատմութիւնը. նորա նկարների և ստուերագրութիւնների նմանատիպ օրինակները, ֆոտոգրաֆիկական ձևահանութիւնքը նորա լոլոր պատկերների, թէ վաւերականների և թէ ենթագրականների, որպէս և ձևահանութիւնքը նորա աշակերտների և նմանողների ձեռքով պատրաստած պատկերների։ Այս հաւաքածոյովը, որ նա կարգադրել էր և նոցա վերայ գրել էր ծանօթաբանութիւնք, կամենումէր նա, որ կարողանային վերլուծանել հետ գնհատէ կերպարանագործութիւնը այս ականաւոր հոգեղարդ մարդու, որ կատարելութեան տիպ է։ Նա սահմանել էր այդ հաւաքածոն, որ հանդիսայնուի

վինդսորեան ամրոցի դահլիճների միևի մէջ, որ յետոյ տեղափոխուի Լոնդոնի ազգային պատկերաժողովի մէջ, և նորա դիտաւորութիւնը, տարակոյս չունինք, որ ճշդիւ լցուցանուելու է [1]։

Իշխան Ալբերտոսը ունէր արդարև մի, արժանապէս խոստովանուած հեղինակութիւն ճարտարութիւնների դատողութեան մէջ։ Ոչ ոք խօսում էր այդ նիւթի վերայ աւելի բարձր, քան թէ նա։ Ահա այն աղնիւ բանախօսութիւնը, որ լսելի կացուց նա պատկերահանութեան արքայական ճեմարանի տարեկան հանդիսաւոր հաւկերութեան մէջ, երբ որ նա նախագահ գտանուեցաւ 1851 մայիս ամսի ժողովում։

Ա՛արտարապետը և բանաստեղծը համեմատելով այն քնքուշ բոյսերի հետ որ պիտոյ էր զգուշութեամբ պահպանել ցրտահարութիւնից գառն և խոշոր խօսքերով, որ և կարօտ են մի քաղցր, բարեացակամ ատմոսֆերայի (օդեղէն շրջապատի) վառն յառաջացնելու իւրեանց ծաղիկների և պտուղների պահները — «այնու ամենայնիւ, յաւելացնում նա, կրիտիկան (գատողական քննութիւնը) հարկաւոր է ճարտարութեան յառաջադիմութեանը, և մի ստորին գործի անխնել գովաբանութիւնը է մի անիրաւութիւն և անարգանք դէպ ի գերազանց քանքարը։ Այս մասին, մեր ժամանակը առաւելապէս անձեռնտու է, եթէ համեմատենք զորան այն ժամանակի հետ, երբ մեզոնպաքը (տիրամօր պատկերները) նկարվում էին մենաստանների առանձնութեան մէջ. պատճառ, մի կողմից մեք ունինք մի կրկոտ նախանձաւոր բազմութիւն ճարտարապետների, որ եղևեղք են առնում միմեանց հետ, միւս կողմից իրրև գատաւոր մի այնպիսի հասարակութիւն, որի առաւել մեծ մասը լոկորովին զուրկ է ճարտարապետական գատաիարակութենից, որ և թոյլ է տալիս կրիտիկոսներին ըստ պաշտօնաւիճակի, ուղղել նորան դէպ ի այս կամ այն կողմ, որ և նախանձոտութեամբ դնումեն հասարակութեան վրի վերայ իւրեանց առանձին գիտութեան գաղափարը, առողջախել արհամարհութեամբ խօսելով այնպիսի ճարտարապետական գործերի վերայ, որ իւրեանց հեղինակներին արժել էին ամենամեծ աշխատութիւնը խմացականութեան կամ թէ զգայողութեան, ճարտարապետութեան գործերը, հրապարակի մէջ դուրս դրուելով և վաճառուելով, դառնումեն վաճառականութեան նիւթ, և այդպէս ենթարկվում են վաճառականի և առօրեայ ախորժակի օրէնքին, որ ծուռ և թիւր օրէնք են, և նոցա*

---

[1]) Իշխան Ալբերտոսը օրինակել է և յետոյ փորագրել է ինքը մի քանիսը իւր հաւաքածոյի բուն իսկական նկարներից։ Նա էր նոյնպէս յաջողակ փոտոգրաֆ։ Նոյն ինքը ի պատուհին Անգլիայի ունի ճարտարասիրութեան գեղեցիկ քանքար։ Նորա նկարներից մի քանիսը, որ վերտոին ձևացուցել է իշխանը, կրումեն նոցա կրկնատառիկ նշանը, կամ թէ նոցա անունների տառագարձութիւնը։ Իշխան Ալբերտոսի փորագրած պատկերների օրինակները մնել են վաճառականութեան մէջ, մի խարեբայ ձանապարհով, և իշխանը տասպատած գտանուեցաւ գիմել դէպ ի առեանքը, որ վակել տայ նոցա վաճառականութիւնը։

բռնակալական աղդեցութիւնը ուղղութիւն է տալիս թէ հրապարակական և թէ առանձնական պաշտպանութեան»։

Անգլիացոց առողջամտութիւնը հերիքանում այս համեստ փառքով ու պարծանքով, որ գուցէ թէ բաւական լինելու էին միւս ազգերի ունայնասիրութեանը, իւրեանց իշխաններին վերայ ցաւելու համար։ Այսպէս, տարակուսանքը որ պատրաստել էր իշխան Ալբերտոսի հիւանդութիւնը, դարձաւ ընդհանուր, և հրապարակական սուգը որ յաջորդեց նորա մահուն, նոյնքան ևս անկեղծ էր, որքան մեծարողապէս ցաւակցութիւնը որ մի փոքր յառաջ ցոյց էին տուել Անգլիայի նոր հերոսին, դուքս Վելլինգտոնին։

Իշխան Ալբերտոսի թաղման հանդէսը էր սիրտ շարժող աւելի, քան թէ փառահեղ, մի ընտանեկան ուղարկաւորութիւն որի հանդիսակից պաշտօնակալքը թագաւորութեան կողմից նանւացած էին մանուկ արքայազների ներկայութեամբ, արտասուք թափելով։ Թաղման երգերի աւելի մեծ մասի երաժշտական եղանակը յօրինել էր ինքն հանգուցեալը, և այս վերջին րոպէին տակաւին, նորա ճարտարապետական պատուանուէնը յառաջընթաց եղաւ այն բոլոր միւսերին որ ազդարարողը ծնկակապի ասպետական նշանի պիտոյ է քարոզէր, յառաջ քան թէ դա, իբրև պարտ ու պատշաճ պատիւ հանգուցեալին, ցած էր դրուելու արքայական դամբարանի լուսթեան մէջ։ Դագաղը արդէն ցած էր թողած այն տեղ, և ահա վերայ հասաւ մի փունջ մանուշակ ծաղիկներից, մի կամելլիա մէջ տեղումը, որ ուղարկել էր թագուհին Օսբորնից, և որի վերայ երեք մանուկ արքայազն դուստրները յաւելացուցել էին ամեն մինը մի ծաղկահիւս օղ։

Ինչպէս որ պիտոյ էր յուսալ, շուտով խօսք բացուեցաւ, իշխան Ալբերտոսին մի յիշատակարան կառուցանելու վերայ։ Times օրագրի հրատարակիչը առաջարկում էր մի քարկոթող, որ կառուցանելի էր այն տեղը վերայ ուր Հայդ-Պարկի մէջ շինած էր ապակեղէն ապարանքը. «Իշխանին արժանաւոր լինելու համար, ասում էր նա, պիտոյ է այդ յիշատակարանը լինի բրիտանական մշրաքաղաքի զարդերից միևը։ Այս լինելու էր առաջին ընծայաբերութիւնը, ստուգապէս ազգային որպէս յիշատակարան, նուիրած Բռաունշվեկիայի իշխանատոհմի զաւակին։ Մեզ պիտոյ չէ յառաջ գնալ, որոնելու մի յիշատակարան, որ նուիրած էր մի մեծ տիրապետողի յիշատակի։ Եթէ իշխան Ալբերտոսը չէ կործանել թագաւորութիւնք, ահ ու դող չէ բերել ցամաքահող աշխարհների վերայ, եթէ նա առիթ չէ ունեցել վարչինելու ընկերական կարգի շինուածը մի միապետութեան, մի աստուածպաշտութեան, մի աղնուապետութեան աւերակների վերայ, գոնեայ նա արել է ամենայն բարի բան, որ կարող էր առնել, և այդ բարին արել է անխտիր և անսարսափ կերպով, աղատ ամենայն անարատութենից, աղատ ամենայն պատուախնդրութենից։ Ուրեմն թող կառուցանենք նորան մի քարկոթող, մի քարեղէն մատն որ ցուցանում դէպ ի երկինք, ի յիշատակ մի

տղամարդի որի բոլոր ձգտողութիւնքը ելած են աղնիւ, մեղմ և պատուելի։ Թող յաղթութեան կամարներ և կայսերական հռոմի սիւների նման արձանները մշտնջենաւորեն կռիւների և տիրապետութիւնների յիշատակները, բայց մեք թող կարողանանք նախանձաւոր լինել այդ փառահեղ յաղթական նշաններին պատերազմի, կառուցանելով մի յիշատակարան ի պատիւ խաղաղութեան, ճարտարութիւնների, գիտութիւնների, գրականութեան և առանին առաքինութիւնների։

Ս. Նազբեանց։

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՐՄԱՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԸ։

ՑԵՂ, ԵՒ ԱԶԳ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ.

(Շարունակութիւն.)

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱԿԱՑՈՒԹԵԱՆ ԻՒՒԹԻՒՆԸ.

Նթէ մեք մինչև այժմ ասածներումս ընդունել ենք թագաւորութիւնը որպէս ամենավերին առարկայական (արտաքին, տեսանելի) կերպարանաւործութիւնը մարդկային իմացականութեան, դորանից տակաւին հետևում չէ, որ ամենայն, ներկայումս ազգի վերայ եղած թագաւորութիւն լցուցանում այս վսեմ խորհուրդը։ Եւ գերդաստանը սուրբ է. այնու ամենայնիւ կան գարշելի ամուսնութիւնք և անգութ ծնողներ շատ ու շատ։ Ապա, թագաւորութեան վսեմ խորհրդից հետևում չէ դեռ և այս, որ նա լինի ազնուական։ Թագաւորութիւնը համեմատ է միայն իւր էութեանը և խորհրդին, երբ նա կեանքի մէջ ընտանի է կացուցանում Աբդուլլահին, որ բաղկանում է Բոլոր առանձին էութիւնների զուգադրութենից։ Իրաւունքը վերաճում է աղատութենից, և Հասարակրդութիւնը առաջնորդում է դէպ ի Աբդուլլահ։ Ճշմարիտ աղատութիւնը յարգում և խնայում է ամենայն մարդկայինը, և ընդհանուրին տալիս չէ կարողութիւն այնպիսի իրաւունքների վերայ, որ մտածելի են իբրև բան անհատական։ Զոր օրինակ, մի առաւել մեծ բազմութիւն կարող չէ վճռել մի առնչի փոքր բազմութեան հաւատի մասունքը. այլև չունի ոչինչ փոխարէն մատուցանելու, եթէ կրճատում նորա խնդական բարիքը, որ իրրև խնդական բարիք անվաճառելի և անփոխանորդելի են։

Ընդհանուրը կարող է միայն անօրինել այն բանը, որ վերաբերվում է ընդհանուրի իրաւունքին. մարդուս իրաւունքը պիտի մնայ անխտեռնալի։ «Աստուածպետական իրաւունքը» տեղի է տուել մարդկային իրաւունքին։ Նա չգիտէր ոչինչ սահման, բայց սա էականապէս ազգադրութիւն է. նա ստուերական ոճով տուել է թագաւորութեանը հաւատը դէպ իւր մշտնջենաւոր տևականութիւնը, բայց սա պիտի տայ նորան իւր ճշմարիտ իսկութիւնը։

Ընդարձակ ճշմարտապէս մշտնջենաւորը թագաւորութեան մէջ, է ազգային կապը, բայց և նոյնպէս մարդկայնութիւնը, իրաւունքի իմաստին համեմատ: Եթէ թագաւորութիւնը է մի ազգային կապ, եթէ նա բովանդակում մի ամբողջ ազգ, դա է միայն նորա տեղական սահմանափակութեան շարժառիթը և հայեցական սկիզբը, արդարև յայտնի կացուցանվելով լեզուի, բարք ու վարքի և ազգային պիտոյքի մէջ (զոր օրինակ այն չափով, որ չափով հաւասար էին միմեանց երկրագործական և վաստակասիրական զօրութիւնքը), այլև աշխարհի բնական դրութեան և որպիսութեան մէջ (զոր օրինակ պետերի և գետաբերանների սեփականութեան մէջ): Բայց մարքի փոփոխութեան համար աւելի վեր բան է, որ թագաւորութիւնը է մի մարդկնէղէն կապ: Օրէնքէ ե օրէնսդոսւթեան մէջ կշիռ ունի միայն այս խնդիրը մարդկութեան — որ ամեն մի առանձին թագաւորութեան օրէնք արժան և պարտ էր համեմատիլ այն մեծաւորական դաղափարին որ այս յատկացած ազգը մարդկութեան մասին կրում իւր մէջ, որպէս թէ այդ օրէնքը իսկապէս արժանի էր և կարող էր կշիռ ունենալ բովանդակ մարդկութեան համար: Այս պատճառով, հին ազգերը իւրեանց օրէնքը միայն խոստովանութիւնն բանաւոր և համարաւմէին ամենայն միւս ձև, որ խոտորվումէր նոյանից, Բաբելոնեայ-Ինդ, մինչև Հռոմայեցիք գտան դաղափարը բնական իրաւունքի, որ հաստատակաց էր ամենայն ազգերի: Նոր ժամանակի օրէնսդրութիւնքը արդէն աւելի մօտեցած են միմեանց, որովհետև յետ են դառնում դէպ ի նոյն առաջարկութիւնքը:

Հին աշխարհի օրէնքը զոհել է մարդս թագաւորութեան խորհրդին, բայց նոր ժամանակների մարդը կամենում իւր մարդկայնութիւնը ապահովեցած տեսանել ընկերական միաբանութեան մէջ: Ոչ մի քաղաքական ատաւածութիւն չպիտի նորանից մի ակամայ զրկանք պահանջէ. այլ մանաւանդ պարտ է թագաւորութիւնը սպասաւորել անհատների ամենազատ կերպարանագործութեանը: Հին թագաւորութիւնների կուռքերը կործանել է Քրիստոս, նոր ժամանակների թագաւորութեան դաղափարը (եկեղեցամոլ միջին դարերը չունէին ոչինչ դաղափար) էականապէս ազատախիղճ է և մարդկնէղէն: Ինչպէս ճարտարութիւնը դարձել է բնութեան և պէտքերուն, որպէս զի յետ անցած գնացած օրերի փառահեղ ծիսապաշտութեանը, որից մնացել է միայն մի անհնչան ստուերապատկեր, զովանոյ և կաղդուրվի մի այլ ներշնչութեան աղբիւրից, նոյնպէս այժմ հասել կարդը օրէնքին: Օրէնքը իսիտ յառաջագէմ կացուցանէ իմ մարդկային բաղդաւորութիւնը և ոչ թէ միայն իմ քաղաքացի կացութիւնը:

Վանձնական նպատակը թագաւորութեան չէ նոյն ինքն թագաւորութիւնը. թագաւորութիւնը չէ մի դատարկ նոյնարանութիւն, որ միայն պնդրում իրը. նորա խորհուրդն է մարդս, բայց ոչ սա և նա, և ոչ իսկ միայն բոլոր այժմեայ ապրող և ներկայ սերունդները. պատճառ, այն ժա-

մանակ միայն է թագաւորութիւնը ինքն իւր համար խորհուրդ, երբ որ նա առաջարկում է իւրեան իրրև լցուցանելի հնդիր մարդկային բաղդաւորութեան լիակատար իրողութիւնը։

Այո՛, թագաւորութիւնը ունի առհասարակ ապահովելու ամեն մի առանձնականի իրաւունք, համաձայն էքսպէդիէնս· բայց նա ունի լցուցանելու մի շատ ու շատ աւելի գործ, միայն թէ նա պարտ է այս բանի մէջ պնդապէս վարուիլ, որ ոչ մինը չզոհուի միւսին, և ոչ իսկ սակաւները շատերին։ Մարդս չպիտի համարուի ոչ լոկ շնչաւոր և ոչ իսկ հրեշտակ· իրաւունքի հիմքը չպիտի դրած լինի ոչ կոպիտ եսականութեան վերայ, և ոչ իսկ հասարակութիւնը ունի իշխանութիւն պահանջելու կոյր զոհաբերութիւն, այլ ամենին պարզապէս, օգուտների և պարտականութիւնների զուգապատշաճութիւնն է, որի մէջ գտանվում է առակի մեկնութիւնը։

Ա՛ներ օրերում տակաւին, թագաւորութիւնը է մի Մողոք որ կլանում է ամենայն բան, որ է մի հատ անձը լիակատար իրաւունքով։ Աղատասէրքը «կարճատես գործականութեան» կարգից, վախում են նորանից, և աշխատում են կրճատել նորա կարողութիւնը։ Աւելի, տնտեսականն հակառակորդքը համարում են նորան մի հրէշ· բայց դոքա չիմոքում թագաւորութիւնը այս կամ այն թագաւորութենական ատենի հետ։ Մի քանի Սոցիալիստներ կը ցանկանային ամենեին արտաքսել թագաւորութիւնը և լոկ ընէբ-ւեյ-ին դնել նորա տեղ։ Նոքա բառովը ընկերակեցութիւն հասկանում այն գրեթէ այն բանը, ինչ որ մեք նշանակեցինք բառովս հասարակութիւն, մի միաբանութիւն որոշեալ խորհուրդներով։ պատճառ, նոքա չեն պահանջում ոչինչ աղգային կազ, նոքա երթում են պայմանագրութեան ճանապարհով, և նոցա միաբանութիւնը չունի ոչինչ հարկաւոր, ներքին սահմանաւորութիւն, նա կոմմոպոլիտեան է մի անորոշ մտքով։ Նոքա դատապարտում են թագաւորութիւնը, որովհետև մնաւորապար ընդունում են նորան իրրև մի լոկ (մանաւոր) իրաւական թագաւորութիւն, որպէս թէ դա արդէն հասել էր իւր կերպարանագործութեան վերջին ստադիոններին (աստիճաններին), իրրև թէ կարող չէր աւելի բարգաւաճել, քան թէ այժմ է, իրրև թէ տեսած չէինք, որ նա ամեն մի դարու մէջ ընդարձակէր իւր սահմանը և իւր խորհուրդները։ Բայց եթէ մեք թագաւորութեանը ընծայում ենք մի չքաւոր իրաւական իմաստ միայն, այնուհետև ի հարկէ կարելի չէր դրան տեսանել իրագործած։ Արդարև թագաւորութիւնը չպիտի իրագործէ ոչինչ միւս բան, բաց ի իրաւունքից, բայց իւր յատուկ իրաւունքը, ոչ թէ միայն առանձնական մանաւոր իրաւունքը, այլ սոյն իսկ իրաւունքը աւելի բարձր մտքով, այսինքն ընէբ-ւեյ-ին իրաւունքը համաձայնարար անհատների իրաւունքի հետ։ Պատճառ, լոկ մանաւոր իրաւունքը կարող չէր ոտքի վերայ պահուիլ. մի անչափելի կամապաշտութիւն յողդողդուլու էր դէպ ի այս և այն կողմ։ մանաւոր իրաւունքը կայ միայն որ-

պէս մի երկրորդական մասը մի աւելի վերին ներդաշնակութեան, և ընկերակցութեան իրաւունքը է ահա ներդաշնակութիւնը անհատների իրաւունքի։

Նորա, որ ընծայել են թագաւորութեանը մի բնաբուսական սկզբնաւորութիւն (զոր օրինակ Հալլեր իր Restauration der Wissenschaften, 1816—20 և Թոմաս Հոբբէս 1588—1676, իր Հնչակաւոր գրքի մէջ, մակագրութեամբ «Leviathan») վերածումն նորան դէպ ի կոպիտ բռնութիւնը, մի հատ բնական զօրութիւնը որ հասկացել էին նորա.— միտքը ձգտելով դէպ ի իրական թագաւորութիւն ստած բանը, հետևեցնումէին նորան պայմանագրութենից, որովհետև իրաւունք հասկանումէին նորա հաստատութիւնը (զոր օրինակ Թոմաս Պայնէ հիւսիսային ամերիկացին, 1736—1809, որ գրել է բացատրութիւնք մարդկային իրաւունքի վերայ)։ Սորա, շատ շատ, փիլիսէ զերմանական փիլիսոփայի հետ հասան այն առաջարկութեանը, թէ ոչ որ կարող չէր առաւել իրաւունք յանձնած լինել թագաւորութեանը, քան թէ առ հասարակ կարևոր էր իր յատուկ բարեկեցութեան համար — թէ անձնների իրաւունքը պէտք ընդարձակ թիւն ունին, որչափ հարկաւոր էր նոցա, հաստատ մնալու համար միմեանց մօտ, — կամ թէ, ինչպէս Արիստոտելէս (իր Պոլիտիկա գրքի մէջ, 380 տարի Քրիստ. յառաջ) հասել էին այն առաջարկութեանը, թէ ամենալաւ ձևաւորութիւնը թագաւորութեան պէտ է, որի մէջ ոչ միտը չէ զոհվում միւսին, կամ թէ շատ սակաւները միայն։ Էմմանուէլ Քանթ, զերմանական փիլիսոփան (որ ապրել է 1724—1804) մէջ բերեց այսպիսի առաջարկութիւն, թէ «ամենայն կարգ և սահմանադրութիւն թագաւորութեան մէջ, որ պիտի արժան և իրաւ համարուէր, պարտ էր լինել այնպէս, որ ունենար մի ընդհանուր հիմնականոնի կշիռ ամենեցուն համար»։ Սոյն միտքը բացատրումէ ժողովրդը մօտաւորապէս այսպիսի առածներով. «Ինչ որ միտի համար իրաւունք է, միւսին կը պատկանի արդարութեան կանոնով» (պատճառ, ինչ որ միտը սեփականումէ իրեան իրրև իրաւունք, նոյնը ուրուրիւթէ հասանումէ միւսին).— կամ թէ «Ինչպէս դու ինձ, նոյնպէս ես քեզ». կամ թէ բարոյախօսական ոճով. «Ինչ որ դու չկամիս, որ միւսերը առնեն քեզ, պդ մի արա դու ուրիշներին», և այլն։ Փիլիսէն և Ժան Ժակ Ռուսօ (իր գրքի մէջ մակագրութեամբ «Contrat Social») պէտք են համարում, որ մի կամաւոր պայմանագրութեան չափով պիտի չափուէլ կարողանայ ամենայն կարգադրութիւն թագաւորութեան մէջ, եթէ արժան է, որ դա ունենայ իրաւացի հաստատութիւն։

Ասա բոլորը մի մտանով ուղիղ է, բայց գործնով դեռ ևս չէ յառաջանում ոչինչ գրական պարտնակութիւն իրաւունքի։ Եւ ոչ իսկ հեգել փիլիսոփայի խօսքերը «Բարոյական իմացականութեան օրգանաւոր իրագործութիւն, գոյականութիւն, կազմուած» յառաջ են տանում մէկ աւելի քան թէ մինչև ամենեին հասարակ (մտանաւոր) իրաւական թագաւորու-

թիւնը։ Ա՛յնու ամենայնիւ — եթէ որ և իցէ ընկերական ձեւ աւորութիւն կա-րող է ապահովել մարդուս մարդկային ազատութիւնը և երջանկութիւնը, եթէ որ և իցէ քաղաքական կարգ պարունակում է իւր մէջ գործականութեան ապարէզ ականաւոր իմացականութեամբ և արիական հոգով զարդարուած տղամարդերի համար — դա է ազգային թագաւորութեան միակ, մշանջենա-ւոր և ընապատշաճ կապը։ Բոլոր միւսերը են կամապաշտական ձևեր, բայց այս ձևը կարող է ընդունել իւր մէջ ամենայն միւսը և մշակել նորան։

Ֆիլոթէ փիլիսոփան իւր քննողական մտածութեամբ յառաջ գնաց մինչև «Մի ընկերակեցաբար կազմաւորած թագաւորութիւն» իւր գրուածի մէջ, մակագրութեամբ «Փակ ու ամիրոի վաճառական թագաւորութիւն», բայց առանց աշխարհաքաղաքային շարժողութեան և առանց առանձնական ազատութեան։ Մի՛ թէ անհնարին պիտի լինէր այս բոլոր շարժառիթքը թագաւորութենական և մարդկային կեանքի միաւորել ընկերակեցական կազմաւորութեան խորհուրդների հետ։

Թագաւորութիւնը է մի գործարան արդարութեան, արդարութիւնը է հաշտութիւն բոլոր առանձնական իրաւունքի, ճանապարհ խաղաղութեան միմեանց հակառակ օգուտների մէջ, իրագործութիւն արդարութեան (ոչ թէ մի լոկ կարեկցութիւն արդարութեան)։ Թագաւորութիւնը է մի գործա-րան, ուրեմն նորա բոլոր անդամները կապակից ուլծորդ են իրեար հետ, փո-խադարձաբար կարօտ լինելով միմեանց։ Նա մի ամբողջութիւն է, մի հա-մայնութիւն, որին ծառայումեն անդամները, և որից դարձեալ ստանումն իւրեանց կենսական զօրութիւնը. բայց այս անդամները ինքն ըստ ինքեան են արդէն ազատ և հաւասարապատիւ մարդիկ։ Իրաւունքի ըմբռնողութեան մէջ չկայ ոչինչ չափ և կանոն, որով կարելի էր արդարացնել այսօրեան օրումն եղած զանազանութիւնը։ Արդարև ընկերական շարժողութիւնը մնացել էր մինչև այժմ իրաւական թագաւորութեան պիտակցութեանը խորթ և օտար. թէպէտ նա ներգործել էր սորա վերայ, բայց ոգեա երկուքը փո-խադարձաբար հասկացել չէին միմեանց հայեցական սկզբունքը, չէին ըմբռ-կցուել միմեանց հետ։ Իրաւունքը մնացել էր սառն և կրաւորական դէպ ի իւր նիւթքը, և այս է պատճառը, որ Ռուսական ընկերակցութիւնը պատմութիւնը է միայն պատմութիւն անիրաւութիւնների, այսինքն անհաւասարութիւն-ների։

Ս. Նազարեանց։

ՆԱՄԱԿ ԱՌ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԸ·

ՊԱՏՈՒԵԼԻ ԱԶԳԱՍԷՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՀԻՒՍԻՍԱՓԱՑԼ ՕՐԱԳՐԻ·

Տեսանելով Ռուսաստանի մէջ Հայերի այսքան անհոգութիւնը դէպ ի իւրեանց ազգային բարին, տեսանելով մանաւանդ մեր նոր Հայկական գաղութեան այսքան յետամնացութիւնը, ընկերական կեանքի պակասութեան պատճառով, տեսանելով վերջապէս, որ Հայոց երիտասարդը գրեթէ ոչինչ օգտաւէտ աշխատութեամբը չեն պարապում; ցաւելի է ասել, որ և առանց անձնուրացութեան կարող չէին պարապել, միտ դնելով ազգի մեռելական սառնասրտութեանը դէպ ի որ և իցէ խմացական բարիք· այդ բոլոր թշուառութիւնը նկատելով, մտածողի առաջև ծնանումէ մի շատ բնական խնդիր, արդեօք ինչ կամին և ուր են գիմում մեր Հայերը, և թէ մի այդպիսի անիմաստ և անմիտ կեանքի վերջ ու վախճանը ինչպէս պիտի լինէր մի օր· որովհետև, ըստ մեր կարծիքի, ամենայն բան աշխարհիս երեսին, ազգ, կրօն, նկեղեցի, գիտութիւն, արուեստ, կենդանի է, անմահ է այն ժամանակ միայն, երբ նա յառաջադէմ է, յառաջ է խաղում ժամանակի հետ· ապա թէ ոչ, մեռած է, կամ թէ կը մեռանի մի օր, իբրև ղուրկ կենդանական կարողութենից, իբրև դուրս ամենայն կարգից, իբրև անարժան և անպիտան մարդկութեան մէջ, ամենևին նման այն անպտուղ թզենուն, որ մեր Տէրը չորացրեց, որովհետև նա անխորհուրդ տեղ էր բռնում հողի վերայ, որովհետև ամենայն ծառ որ բարի պտուղ չէ բերում, պիտի կտրուի և ձգուի կրակի մէջ — ասում Տէրը·

Ես հարցանում եմ, ինչ են մտածում և ինչ կամին Հայերը — այս խընդիրը անպատճառ պիտի բացատրուին, եթէ մի խելացի, մի բանական, մի լուսաւոր Հայ պիտի բարոյական պատճառ ունենար պատուելու և սիրելու իւր ազգը· Մեր Հայերը կամ պիտի զարթնուն դէպ ի մի նոր կենդանութիւն, կամ պիտի մեռանին մի յաւիտենական ազգային մահով· մի միջա-սահման բան չկայ այս տեղ·

Ձեր աղատամիտ և աղատախոհ Հիւսիսափայլը ներգործում ահա հինգերորդ տարին· եթէ նորա ճառագայթները — շատ ու շատ լուսապայծառ, քան թէ ասիական մարդերի թոյլ և ցաւագարուած տեսութիւնը կարող էր տանել նորան — չեն յառաջացուցել մինչև օրս այն բացարձա-

կութիւնը կամ ցոլացութիւնը որ ցանկալի կը լինէր, եթէ այն լուռ ու մունջ աշխարհը, որի հետ մինչև այժմ խօսել էք Դուք, պատասխան չէ տուել Ձեզ, դուք ի հարկէ կորուսել չէք ձեր համբերութիւնը, քանչ գիտելով, որ չէր կարելի մի ազգի շուտով զգաստանալ և ուշը վերան հաւաքել դիմի այնքան ծանր և երկար ու ձիգ կաշկանդութեան մի ասիական քնի մէջ. բայց հաւատացէք ինձ, որ այս և այն աղնուամիտ Հայերի մէջ — թող լինէին դարբան շատ սակաւութիւն, — պիտու ամենայնիւ յառաջացուցել է մի ծածուկ շարժողութիւն, մի գաղտնի զարկողութիւն սրտի, իբրև պատասխան Ձեր ազգաշինական գաղափարներին: Հիւսիսափայլը քարոզել է ազգի մէջ նորա, ինքն իւր անձն հասկացող մտածութիւնը, նորա հին, վաղուց ձնշած ու ծառայեցուցած հոգին, նորա մանուկ հոգին, որ մարդարէաբար ճանաչումէր իւր գալոցքը, և կամէր իւր յատուկ աշխատասիրութեամբ պատրաստել և տնօրինել այդ գալոցքը, այդ ապագայ օրերը:

Մենայն բարեմիտ և փոքր ի շատէ բանագէտ Հայ պիտի աւ ի սրտէ ցանկայ, որ երևէին ազգի մէջ լայնախորհուրդ ազգասէր ճշմարտախօս անդամներ, որ ծնանէին օրագիրք պէսպէս պարունակութեամբ և ամեն կողմից թափէին ազգի վերայ գիտութեան լոյսը և կրթութեան բարիքը. բայց, ո՛վ մեր հայկական թշուառութեան, և ներկայումն եղած միտ ու կէս օրագիրը ազգի ուսումնատեաց, սակնասիրտ, այո՛ անմխիթար քարասիրտ, գուցէ թէ և ամենևին անսիրտ բարքից, կարող չէ պահպանուիլ, և այսօր էգուց պիտի կործանուի: Ո՛ր փաբրիկանտը աշխարհի երեսին կարող է իւր կապիտալը դնել մի ապրանքի պատրաստութեան վերայ, որոյ համար չկայ վաճառելու հրապարակ, որոյ լինդրողքը բոլոր հասարակութեան միջից մի տասն, քսան, երեսուն մարդ էին. ապրանքի կարօտութիւնն է, լինդրողքն են, գործադրողքն են, որ պահպանումեն մի փաբրիկացիա և մի փաբրիկանտ. այսպէս մի՛ թէ կարելի է մատենագրութիւն մի ազգի մէջ, թէ գիրք, թէ օրագիր և թէ լրագիր, եթէ չկայ կարդացող հասարակութիւն, ոչ ժողովուրդ, ոչ աշակերտք, ոչ ուսումնասէրք. և մինչ երբ գիտութիւնը պիտի մնայ բացականութիւն առնէ, ողբութիւն ժողովէ ազգի մէջ, և մի՛ թէ մի մատենագրութիւն խարհուրդ ունի այն տեղ, ուր նա է միայն կարօտ հասարակութեանը, բայց հասարակութիւնը նորան ոչ. ուր հասարակութիւնը, թէև ոտքից մինչև գլուխ տգէտ, անկիրթ և ամենայն բանի մէջ մերկ ու չքաւոր, բայց մրժելով մրժուամբ, հալածելով հալածուամբ իւրեանից ամենայն մտաւոր կերակուր, կարօտ չէ ոչինչ ուսումնասիրութեան, ոչինչ գիտութեան, ոչինչ կրթութեան, ոչինչ մատենագրութեան: Պատուելի ազգասէր Հրատարակիչ, ես բաւական չեմ գտանում բացայայտելու իմ սրտի ցաւը մեր լուսնաւոր թշուառութեան վերայ, որին Դուք ի հարկէ, այսքան տարի գործ ունելով Հայոց ժողովրդի հետ թէ Ռուսաստանում և թէ, մանաւանդ կերպով, Ցամքաստանի մէջ, աւելի մանրամասնաբար ծանօթ էք, քան թէ ես,

և այս պատճառով ցանկալի կը լինէր մեզ ամէններիս, որ ժամանակ առ ժամանակ Հիւսիսափայլի մէջ, ամէն մի վերջամանկից յետոյ հաշիւ ու համար տրուէր ազգի բարեմիտների առաջև, թէ որքան են Ձեր օրագրի ընկերագիրքը, իրրև մի չափ, որով կարելի էր չափել ազգի մատնակցութիւնը և գործակցութիւնը ազգային լուսաւորութեան գործին։ Փոյթ չէ, որ ձեր անձնական թշնամիքը — թէպէտ այս խօսքը մի անխորհրդ խօսք է, որովհետև դուք մինչև այժմ ազգի համար էք գործ կատարել իրրև մատենագիր և օրագիր հիմնական, և ոչ թէ ձեր համար, ուրեմն ձեր թշնամիքն ևս ազգի թշնամիքն են յատկապէս — փոյթ չէ, ասում եմ, որ ձեր թշնամիքն տեսանելով ազգի շատ փոքրաթիւ ընկերակցութիւնը ձեր օրագրին, մի վայրկեան ուրախութեամբ պիտի ընծայեն իւրեանց աննման քաջագործութեանը — բայց գոնեպ գորանով կը յայտնուի մեզ ազգի պարծանքը կամ ամօթը և Դուք, իմ կարծիքով, չունիք իրաւունքը խլել մեզանից մեր ուրախութեան կամ տրտմութեան զգացմունքը, թէև ուրախութիւնը լինէր մի չափ, իսկ տրտմութիւնը հարիւր չափ։ Անցեալ տարիներում հրատարակուած ցուցակների մէջ միշտ ուրախութեամբ տեսած ենք որ մեր Հայ քաղաքներից նոր Նախիջևանի Հայերը մանաւանդ մեծ թուով գործակից էին եղած Հիւսիսափայլի հրատարակութեանը, ապա Թիֆլիզ, յետոյ Հաշտարխան, Ղըզլար, Շամախի, Խաբուս, կարծեմ մի տարի և Պարապաղ, ինչպէս տպած էին անուանքը Հիւսիսափայլի մէջ, և այլ մի քանի Հայեր այլ քաղաքներից, ուր բաւական բազմաթիւ են Հայք, կամ թէ բնակութեամբ Հայք միայն։ Այս նկատեցի, որ մեր սիրելի ազգը փոխանակ ևս աւելի բազմաթիւ մասնակցութեամբ յառաջ տանելու և թևթևացնելու Հիւսիսափայլի տպագրութիւնը, պատճառ է տալ հրատարակողին ծանուցանելու հասարակութեանը թէ նա արծաթի պակասութեան պատճառով ստիպուած էր փոքրացնել տպելի թերթերի քանակութիւնը ամնական տետրակների մէջ, և բաց ի գորանից բոլոր աշխատութեան ծանրութիւնը մնում է հրատարակողի ուսերի վերայ միայն, ինչպէս երեւում է Հիւսիսափայլի մէջ տպուած ճառերից։ Մի շատ տրտմեցուցիչ տեսիլ, մի կատարեալ անձնուրացութիւն և նահատակութիւն, որ ի հարկէ ոչինչ բան է պէն Հայերի համար, որ մինչև օրս մի շարք բան դրած չունին Հայերի պաժանան լուսաւորութեան համար, թէպէտ պատրաստ էին հայհոյել ուրիշի անօրինակ առաքինութիւնը, պէտ պէն առաքինութիւնը որին ինքեանք անընդունակ են, որից մինչև գլուխ կոտրած մի հեշտասէր անձնադիւրութեան մէջ։ Եւս այս բաւերս գրում եմ այս տեղ, ոչ թէ մի նոր ձշմարտութիւն կամենալով ուսուցանել մեր ազգի խոհական և բարեմիտ մարդկերին. ոչ, այլ միայն հատուցանում եմ իմ խղճի պարտքը, տալով suum cuique, պսպինքն ամէն մինին իւր արժանը և պատկանելին։ Եւ մինչև երբ մեք Հայերս պիտի բարբարոսաբար մնացած ենք, թէ

ուրանալով արժանաւորի արժանաւորութիւնը, դորանով պիտի չկը դարձուցանէինք նորան. ուղիղն ասեմ, դորանով մեք միայն անարգումենք և թերումենք ինքներս մեր երեսին. ես ամենևին ձայնակից եմ խորիմաստ բանաստեղծ Գեօթէին, թէ «Մի հատ փրկութիւն կայ մեղ գերազանց արժանաւոր մարդու ծանրութեան երեսից, այսինքն սէր և մեծարանք» և պղպիսի սէր ու մեծարանքը — վկայ է Աստուած և ամենայն խելացի մարդիկ ամենայն աղգերի մէջ, բայց ի Հայոց նախանձոտ, օտարի արժանաւորութեան համար կայր, անձական ախտերով ցաւագարած ուսումնականներից, նոյնքան և սիրելի ու պատուելի է կացուցանում մեզ մեր յատուկ աչքում, և այլապէս անկարելի էր. Իմ սրտի վկայութիւնը այսպէս է, քանի որ մեր Հայերի մէջ տիրում այս դժոխարմատ նախանձը ուրիշի արժանաւորութեան վերայ, որից զուրկ ենք մեք, որովհետև ինքներս մեր անձը զրկումենք դրանից, մեր մէջ կարող են միայն փուշ և տատասկ բուսանել, օձ ու կարիճք և ամենայն աղտեղի զեւուներ գոյանալ, բայց մի աղնիւ ու սիրելի բան, երբէք, երբէք ոչ։

Լսումենք, թէ կովկասում ազգային ու հոգևոր անուամբ ուսումնարաններ են հաստատում, զոր օրինակ Պարապաղի մէջ, Թիֆլիզի մէջ, և որ մեծ միսիթարութեան յոյս է տալիս մեզ, նոյն ինքն ժողովուրդն է, հայկական հասարակութիւնը որ իւր միջից հոգաբարձուներ ընտրելով, կամի հոգալ Հայոց զաւակների դաստիարակութիւնը և կրթութիւնը, ազգային արծաթը գործ դնել ազգի օգտի վերայ բարեխիղճ, խելացի տնտեսութեամբ և կառավարութեամբ։ Մենք շատ ուրախ ենք այս բանիս վերայ, բայց մինչև այս օրս ոչ Պարապաղու ազգային ու հոգևոր ուսումնարանի և ոչ Թիֆլիզի մէջ նորևբումն աշխարհական հոգաբարձուների ձեռքը անցած Ներսիսեան դպրոցի մասին չունինք մեր առաջև ոչինչ հրապարակական ծանուցանութիւն թէ ինչպես են կամ պիտի լինին այդ ուսումնարանների նպատակն, ուսումնական կարգերը, ուսումնարանների գոյքի վերայ սրտացաւ հսկողութիւնը, որ դեռ գործ դրուին ազգի իմացական ու բարոյական պիտոյքի համար, համեմատ իւրեանց խորհրդին, այդ մի շատ դեղեցիկ և գովանի հոգացողութիւն է, որովհետև դորանով նախ և յառաջ գաղանների կոկորդից տաղտուկ ազգի տուրքը, իսկ յետոյ ապահով է կացուցանվում ուսումնարանների պահպանութիւնը — բայց դա միայն տնտեսական, արտաքին մասն է։ Ներքին, ուսումնական մասը ինչպես էր և պիտի լինէր, ցանկալի է մեղ գիտել։ Արդեօք այդ ուսումնարանների պատուելի հոգաբարձուքը պիտեն և ճանաչումեն մի ազգային ուսումնարանի պիտոյք, և թէ առանց դպրոցական մտանեագրութեան սկսեալ օրինաւորացեալ մինչև գիտութեան վերին մասունքը, կարող չէ ոչինչ ուսումնարան յառաջադէմ լինել, մանաւանդ Հայերի մէջ, ուր ոչինչ մտանեագրութիւն չկայ ոչ դպրոցական և ոչ ուսումնական, բայց ի մի քանի գործերից որ վենետիկեան ու

վիճնական աբեղայքը իբրև ուսուցիչք ու դաստիարակիչք ազգի իւրեանց լսերից դուրս են Թողել ազգի մէջ։ Մեր կարծելով, այդ ուսումնարանի հոգաբարձուքը ազգի մէջ հրատարակելուց յետոյ Թէ ինչ նեղքին կարող կամին ընդառաջանել ուսումնարանները, պարտական են ազգի հրապարակական բերաններով առաջարկել Հայոց ուսումնականներին այս և այն հարկաւոր պիտոյԹեան վերայ դպրոցական մատեանը շարադրել, սահմանելով ամեն մի աշխատուԹեան արժանաւոր վարձ, ղոր օրինակ ԹերԹին 30—40 մանեթ, կամ Թէ այլ պայմաններով հոգաբարձուների մէջ, միտ դնելով երկուստեք օգտին։ Ազգային մատենագիրքը պիտի քաջալերուԹիւն ստանան, ազգի մանուկների համար աշխատելու, որ աշխատուԹիւնքը խորհրդով յանձն առուին, խորհրդով լցուցանուին և արժանապէս պակուին, և ոչ Թէ, ինչպէս մինչև այժմ եղել է, ամենայն գործ կատարուի ազգի մէջ ըստ դիպուածի և պատահման, ցան ու ցիր և անօգուտ։ Լեզուների ուսման համար պիտոյ են օրինաւոր, փոքր ի շատէ լիակատար բառարաններ, քերականուԹիւններ, ընԹերցանուԹեան մատեաններ ընտիր հատաքածոյ գրուածներով լեզուների ընտիր մատենագրուԹիւններից առած և բացատրուԹեամբը ճոխացուցած. այս մասը կը բանար շատերի համար պիտանի աշխատասիրուԹեան ասպարէզ, աշխատաւորը կ'իմանար որ իւր աշխատուԹիւնը պահանջում ազգը և կը պակուի անպատճառ, միտ դնելով գործի արժանաւորուԹեանը։ Բացի ի լեզուների ուսումնասիրուԹեան պատկանելի գրուածներից, ուսումնարանների հոգաբարձուքը պարտական են հրաւիրել իւրեանց գիտնական երիտասարդները դէպ ի երկասիրուԹիւնք այս և այն դպրոցական գիտուԹիւնների վերայ, ղոր օրինակ մաԹեմատիկեան գիտուԹիւնք, ԹուաբանուԹիւն, երկրաչափուԹիւն, Ալգեբրա, Փիլիքա, բնապատում գիտուԹիւն, պատմուԹիւն և աշխարհագրուԹիւն, ստատիստիկա, ազգային լեզուագիտուԹիւն, հին և նոր (հինը վերին դասատուՀների համար և նորը իբրև կենդանի ներկայի և այժմեան ազգի մտածողուԹեան ու զգացողուԹեան անօթ, իբրև լեզու որով այժմ պիտի խօսէ և մտածէ Հայոց մանուկը և ժողովուրդը, ուրմէն մի ամենակարևոր և նախապատիւ, սուրբ ու սրբազան խնդիր ամենայն մարդու համար, որ կամէր դաստիարակուիլ իբրև Հայ, լինել Հարազատ Հայ, ապրել ու մեռանիլ որպէս իսկական Հայ)։ Հայոց պատմուԹիւն և աշխարհագրուԹիւն և գրականուԹիւն կարօտ են նոյնպէս ուսումնական հիմնաւոր մշակուԹեան, որ կարողանային լինել դպրոցական դասատուուԹեան նիւԹ և կենդանանալ Հայոց Թէ մանուկի և Թէ ազգի համար. և այս մասը դպրոցական ուսման, վերին դասատնելուց, ունի մեծ գործ լցուցանելու, ոչ Թէ Հայոց ազգի հնուԹիւնը տնտանելու ինքն ըստ ինքեան, առանձին ու միայնացած, ոչինչ մնաւորուԹիւն չունեցող այժմեան կեանքի Հետ, ինչպէս մինչև այժմ նայել են դորա վերայ միակողմանի Թշուառ ուսումնականք, այլ դորա Հակառակ, Հայոց հնու-

Թիւնը մեծաւորելով և ամուր կապերով յօդուելով նոր կեանքի հետ, ցոյց տալով որ Հնութիւնը է Հայկական կեանքի կերպարանագործու Թեան առաջին օղերը, իսկ նորութիւնը նորա յառաջաձիգ օղերը ժամանակի պայմանների և ազգի գլխի անցքերի տակ։ Այդպէս, Հնութիւնը և նորութիւնը, որպէս արմատ ու ճիւղ մի հատ ծառի, բնականաբար կը հաղորդուին, կը հաշտուին միմեանց հետ, կը կենդանանան Հայի գիտակցու Թեան մէջ, ոչ ևս պյլ Հնութիւնը անխորհուրդ լինելով նոր կեանքի համար, և ոչ իսկ նոր կեանքը Թշնամաբար բաժանուած Հնութենից։ Հայոց ուսումնականը պարապելով Հայոց Հնութիւնների քննութեամբ, մինչև այսօր միականի տեսութեամբ համարել է, որպէս Թէ Հայոց ազգ և լեզու հինքն են միայն. լեզու և մատենագիրք, գրոց լեզուն է և գրաբառ խօսող Հայոց հեղինակներն են սկսեալ 4 դարուց մինչև 13ը, և այդ սահմանից դուրս ոչինչ հայկական ազգ ու լեզու, գիտութիւն չկայ. ամենևին այնպէս, եԹէ մեր օրերում մի Ռուս կամ Վերմանացի խելագարուէր ու ասէր. մեր ազգը և լեզուն հին սլաւոնականն է կամ հին գութականը. բայց այժմեան ազգը և լեզուն ոչինչ է, այլ խոտորումն և խանգարումն սկզբնական գաղափարի, ուրեմն արհամարհելի և գտատպարտելի իրրև մի բարբարոսական բան։ Զարմանք է, որ մինչև այժմ այս և այն Հայ ուսումնական ասած մարդու աչքում, մեռածն ու գնացածը միայն իրաւունք ունի, իսկ կենդանին ոչինչ է և անարժան որ և իցէ ուշադրու Թեան։ Մինչև որ ասպարէզ մեր նախահարքը կերպարանագործել են իւրեանց ազգային կեանքը, այդ է միայն, և դորանից մի քայլ յառաջ գնալ, ճոխացնել և զարգարել նոցանից մեզ Թողած ժառանգու Թիւնները, յանցանք է, ուրեմն պիտոյ էր մեզ անշարժ ու անփոփոխ կացնել ու մնալ մի և նոյն հնու Թեան սահմանի մէջ, տիմար Ջինէացիք գառնալ։ Այո՛, որ և իցէ նոր ազգ պիտի ունենայ իւր պատմական աւանդու Թիւնքը, իւր նախահարց յիշատակները, որ շատ Թանգագին բաներ են, որովհետև ամենայն ազգ, ինչպէս ասում են Եւրոպացիք, է իւր պատմու Թեան դպրոցի զաւակը, հետևանքը. և իւր պատմական յիշատակների հիման վերայ պիտի յառաջ գնայ և վերանորոգէ իւր կեանքը ժամանակի յառաջադիմ ընթացքի մէջ։ Բայց մի ազգի պատմական աւանդու Թիւնքը և յիշատակները, ինչքան ևս գոքա գերազանց բաներ լինէին, պիտոյ է ոչ Թէ արգելք լինէին գոյն ազգի ազատագոյ յառաջդիմու Թեանը և անդադար վերանորոգու Թեանը ժամանակի հետ միասին, այլ, ամենևին գորա հակառակը, պիտոյ է պարզուղիղ քաջալերու Թիւն և գօրու Թիւն տային գէպ ի ամենայն գովելի և ազգաշէն աշխատասիրու Թիւն։ Հայերը պարծենումեն միայն իւրեանց նախահարց պարծանքով, ինչպէս մեզ երևումէ, իւրեանց, ձեռքը գոգումի դրած անվիտ անգործու Թիւնը արդարացնելու համար. բայց ինչ կ'օգնէ Հայերին նոցա նախահարց պարծանքը, մեր ժամանակը պահանջումէ ամեն ներկայ ազգից իւր յատուկ ձեռքով վաստակած պարծանքը, հարցանումէ

ամեն մինից թէ նա իւր սեփական աշխատութեամբ, իւր խելքով ու բանականութեամբ ինչ մեծութիւն էր ձարել իւր համար, ինքը ինչ արդիւնք էր գոյացուցել մարդկութեան մէջ, ինքը ինչ ունէր արած, որին կարող էր ասել այսօր իւր սեփականը, առանց ցոյց տալու իւր անցած գնացած նախահարց գործերը։ Եւ Աստուած վկայ է, մեծ ամբէն Հայերի երեսին, որ նոցա նախահարքը ականաւոր մարդիկ էին, բայց նոքա անարժան ժառանգներ են այդպիսի նախահարց, իսկ եթէ հարց ու խնդիր կար ազգի այժմեան պատուի վերայ Եւրոպական հրապարակի մէջ, յառաջ են բերում միայն նախահարց պարծանքը, որպէս թէ դորանով կարելի էր մեծարանք գտանել մեր ժամանակներում ինքնաշխատ ազգերի առաջև, որպէս թէ մի հօր պատուականութիւն կարող էր մի անարժան և վատթար որդու անպիտանութիւն ծածկել կամ արդարացնել։ ոչ, ոչ, և յաւիտեան ոչ։ Թող մեր Հայերը բանան իւրեանց մոքի աչքերը, թողուն իւրեանց տղայական կարծիքները, և վերջապէս հասկանան, որ մի ազգ լինելու ազգերի կարգում, պիտի գոյ կատարեն, պիտի նորոգեն իւրեանց կեանքը ազատ գիտութեան լուսով, պիտի սիրեն գիտութիւնը և գիտնականքը, պիտի ձեռնտու լինին ազգային մատենագրութեանը, հնար ու յաջողութիւն տան ամենայն բարի և ազնիւ ձեռնարկութեան ազգի մէջ, և ոչ թէ, ինչպէս մինչև այժմ եղած է և լինում, թաւամ ու մեռած մնան ամենայն լաւ բանի համար, և այդպէս մեռուցանեն ամենայն լաւ բան ազգի մէջ։ Ծառին ջուր հարկաւոր է, որ նա աճի և ղօրանայ, և պտղաբեր լինի իւր ժամանակին, և ուսումը և ուսուցիչը և մատենագիրը կարօտ են քնքուշ հայրական ու մայրական հոգաբարձութեան ժողովրդի կողմից, եթէ պէտք է նոքա ծլին, կանաչին և պտուղ բերին, բայց միշտ հալածանք, միշտ սառնասրտութիւն, միշտ անփոյթ անհոգութիւն, միշտ անձնական պղտոր ու կեղտոտ ախտեր, խարդախութիւնք, թշնամութիւնք և մատնութիւնք դեպ ի իւրեանց բարեմիտ ընկերքը, մի մեռուցիչ անուշադրութիւն դեպ ի արժանի անձնազոհ աշխատաւորքը ազգի — ասումենք, դոքա չեն այն հողը, որոյ վերայ կարող է մի ծաղիկ բուսանել Հայերի աչքի ու քթի համար, այլ մի հող որոյ վերայ անպատճառ պիտի ցամաքին ու չորանան ամենայն ազնիւ բոյսեր, ամենայն կեանք և կենդանութիւն, և այնուհետև բոլոր անդաստանը Հայերի մնայ իբրև մի անմխիթար մեռելութեան անապատ, մի սարսափելի գերեզմանատուն հոգեղէն ու բարոյական մահու, և ո՛վ կա ուսուել սարսափելի մտածութեանս — մի ազգային անմիտ անձնասպանութեամբ։ Ով ունի ականջ լսելու, թող լսէ։ Սերայինքը ներե՛ն մեզ, որ այսպիսի սաստիկ լեզուով խօսում նոցա հետ, մեղմոտ խօսքերով ամենադառն խնդիրների վերայ խօսել կարող էին միայն եղուխները, բայց ես չեմ պատկանում դոցա կարգին. այլև իմ բոլոր կրթութեան և դաստիարակութեան կերպն եղած է այնպէս, որ ուսել եմ ամենայն խնդրի մէջ գործ դնել մի պարզ ու վճռա-

կան լեզու, ասել դէպուղիղ, ինչ որ սիրտս զգումէր, մանաւանդ իմ հո-գու սիրածներին, իմ հայրենական ազգին, որին արժան է իմ անկեղծ ու անխարդախ, թէև սպրասուր սլաքի պէս կտրող, խօսակցութիւնը։ Այլա-պէս չգիտեմ ես ծառայել իմ ազգին, եթէ ոչ ասելով նորան այն բանը, որ ես համարումեմ ճշմարտութիւն, որովհետև իմ սիրտս վկայումէ դորան։

Ձեր ամենալաւ ազգասիրութեան մէջ

մաղթելով Աստուծոյ ամենայն յաջողութիւն

մնամ ամենախոնարհ

Ծ***ը Զելէպ։

15 ին Մայիսի 1862 Թուականի.

ԹԻՓԼԻՍ։

ՅԱՋՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ·

Չեռք զարկելով տպագրել Հայաստանի աշխարհագրական քարտը, դառնումենք դէպ ի մեր սիրելի ազգակիցքը, Ռուսիոյ մէջ, հետևեալ մի քանի խօսքերով։

Ազգային պատմութեան ուսումը որչափ անհրաժեշտ կարևոր է մեր ազգին, նոյն չափով դրեթէ բարձի Թողլ արած ճնացած է երեսի վերայ։ Արդեօք այս անհոգութիւնը պիտի կարողանայ ազգը, չքմեղ երևելու համար, օտարի վերայ բարձել, ինչպէս շատ դիպուածներում գործ է դնում այս հնարը· լաւ է որ չհարկադրեն մեզ այս հարցմունքին պատասխանել. որովհետև անհոգութեան մեղքը պիտի ծանրանայ ազգին վերայ։ Առ այժմ մեք Թողումենք այս խնդիրը, առ այժմ կարևոր ենք դատում ասել այս, թէ պատմութիւնը առանց աշխարհագրութեան անհասկանալի է. և աշխարհագրութիւնը, առանց ուղիղ և ճիշտ քարտերի, դրեթէ անուսանելի, ըստ որում երևակայութիւնը դրական գիտութեան մէջ հանդէս չունի։

Նշմէ հաւատում ենք, թէ մօտենում է ժամանակը, երբ ազգը պիտի սթափէը իւր դարաւոր թմրութենից և պիտի զգար իւր անցածը խմաստասիրելու կարօտութիւնը, ապա ուրեմն առանց աշխարհագրութեան և առանց աշխարհագրական քարտերի չէ պիտոյ կարողանայ լցուցանել այդ կարօտութիւնը, ապա ուրեմն առաջին կարդում դրված է քարտի կազմութեան և տպագրութեան խնդիրը։

Հայը լսելով կամ կարդալով դիտէ միայն թէ կար երբեմն Հայոպան, այլ թէ ուր էր այդ երկիրը, ուր էին նորա սահմանքը, նորա քաղաքները, նորա սարերը, գետերը և նորա ծովերը. ինչպէս բաժանված է այդ աշխարհը երեք պետութեանց մէջ և ուր են նոցա սահմանքը, և այլն և այլն, այս բաներուի մասին լաց ի մի քանի դրագէտներից, գրեթէ, ուրիշ, տեղեկութիւն ունեցողք չկան։ Եւ մի թէ մի բարոյական զօրութեան շարժառիթ չէր նորոգութիւնը այն յիշատակների, որոնց հետ կապակից է եղած մեր

անցած կեանքը։ Մի թէ Հայը, քարտի վերայ տեսանելով իւր աշխարհի տեղագրութիւնը, զգալու չէր մի հետաքրքրութիւն քննել և իմանալ այդ աշխարհի ճակատագիրը, նորա բնակիչքը, նորա անցած և ներկայ վիճակները... Եւ Հայոց պատմութիւն ուսանող երիտասարդը, արդեօք, կիսով չափ թեթևացնելու չէր իւր աշխատութիւնը, աչքի առաջև տեսանելով այն տեղերը և սահմանքը, որոնց վերայ էին պատմական յիշատակարանների խօսքերը։ Այս մասին, մեր սրտի վկայութիւնը ստորագական է։

Մեք ինքներն շատ և շատ զգացած ենք մի օրինաւոր քարտի կարօտութիւն. և Վենետիկ, Պ. Յ. Տատեանի ծախքով տպված քարտը, որպէս նա և Վիեննա տպվածը, չեն կարողացած լցուցանել այն կարօտութիւնը, որ զգալի էր։

Ի վերջոյ, ուսումնասիրելով Հայաստանի աշխարհագրութիւնը, աղբիւրային պատմութենից, ազգային հատ ու կտոր աշխարհագրութենից, զանազան եւրոպական ազգերի արած ճանապարհորդութենից և մինչև այժմ բոլոր Եւրոպայի մէջ այլևայլ լեզուներով երևեցած քարտերից, որոշեցինք տպագրել Հայոց լեզուով մի քարտ, օգուտ քաղելով, մինչև այժմ Եւրոպիոյ մէջ երևան եկած բոլոր քարտերից և կառավարութեանց [1]) երկրաչափերի և աշխարհագիրների պաշտօնական տեղագրութիւններից։

Մեր գաղափարի իրագործութիւնը, այսինքն քարտի կազմութիւնը և նկարը, որպէս նա և պղնձէ տախտակների վերայ փորագրութիւնը և ի վերջոյ տպագրութիւնը, պիտի կատարվի Ռուսոյ ղինուորական նախարարութեան, ղինուորական տեղագրական կառավարութեան մէջ։ Այս առիթով, մեր տպագրելի քարտին վերաբերեալ, բոլոր տեղեկութեանց դիւանական աղբիւրները բաց են մեր առաջև։ Քարտի կազմութիւնը և նկարը յանձնված է վերոյիշեալ տեղագրութեան կառավարութեան մէջ, երկրագրութեան բաժնի պետ, փոխադնդապետ Պ. Շվարեօվին որ պիտի աշխատի մեր անմիջական ներկայութեամբ և թելադրութեամբ, առանց որին հրաժարվում ճարտարագէտը գործ կատարելուց և անհնար է իսկ։ Թէ ինչ աստիճանի կատարելութիւն կ'ունենայ այս քարտը, այդ բանը ինքը ժամանակը ցոյց կը տայ և մեզ աւելորդ է ջատագովել։

Վարտը պիտի բաղկանայ չորս մեծ թերթերից, որ կպչելով միմեանց մօտ պիտի բաղկացնեն մի թերթ, այսինքն ամբողջ Հայաստանի յատակագիծը, քարտի տարածութիւնը, մօտաւորապէս, կազմում 2 միլիոններորդ մասը բուն Հայաստանի տարածութեան, սկսած Ռիոն և Կուր գետերից մինչև միջերկրական ծովի արևելեան հարաւային եղերը, մինչև Ալեքսանդրէտի ծովախորշը։ Եւ ոչ միայն Հայաստանի բուն սահմանը և երեք տէրութեանց

---

[1]) Ռուսոյ և Պրուսոյ։

մէջ Նորան բաժանող սահմանքը պիտի զանազան գոյներով որոշվին, այլ ինքը քարտը ևս երեք գոյնով պիտի տպվի, որով պարզ և յայտնի պիտի երևին ծովերը, սարերը, գետերը և յատակագիծը։

Այս կարճ ծանօթութենից պարզ է հասկացողին որ, 4 թերթը այս կերպ տպելու համար, պիտի պատրաստվի 12 տախտակ, ըստ որում իւրաքանչիւր թերթը երեք տախտակի վերայ պիտի տպվի։ Կարելի էր նոյն տալ պատկերի ձոլն և շրայլ տպագրութենից, կարելի էր միայն սև գոյնով տպել, կամ վիմադրել, այո, ծախքը պիտի թևթևանար, բայց այդ թևթևութեան չափով, արժանաւորութիւնը և ճշդութիւնը պիտի պակասէր։ Մեք արժանաւորութիւնը և ճշդութիւնը ընտրեցինք. և մեր յոյսը դրեցինք Հայոց ազգի վերայ, տակաւին, հաւատալով որ քաղցր կը լինի Նորան տեսանել մեր սիրելի աշխարհի քարտը ախորժելի կերպարանքով։

Որովհետև այս գաղափարի և այս ձեռնարկութեան իրագործութիւնը կարօտ է մեծ ծախքի, որովհետև այս մեծ ծախքի հոգացողութիւնը ծանր է մի որ և իցէ անհատի համար, այս պատճառով հասարակաց մասնակցութեան ձևը ընտրեցինք մեք։ Ասս պատճառով դառնում ենք ներկայ յայտարարութեան դէպ ի մեր նըպատակիցքը և ամեն նշանաւոր քաղաք լացուցանենք կանխիկ ստորագրութիւնը, ենթադրելով որ պիտի բաղկանայ 4 մեծ թերթերից։

Արժան էր այս կամ որքան արժան, այս բանը կարող են ստուգել և վկայել այն մարդիկը, որ գիտեն այսպիսի բաների գինը, ի վերջոյ, որ գիտեն այլ քարտերի գինը, որոնցից օգուտ ենք քաղել, մեր քարտի կազմութեան ժամանակ [1]։

Մինչև այժմ ամեն աշխատութիւն և ծախք յանձն առած ենք մեք, թէ և տակաւին մեծ աշխատութիւն կայ մեր առաջև այս բանը գլխաւորելու համար, թէ և մեք ենք սորա հրատարակողը, բայց ՔԱՐՏԸ ԼԻՆԵԼՈՒ ՉԷ ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։

Հայց ի մի օրինակից մեր համար, արդէն զգում ենք մեր անձը այլ օրինակների վերայ իրաւունք ունենալուց, և այս օրից, դարձնում ենք Նորան ՀՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ [2]։

---

[1]) Turquie d'Asie, dressée par A. H. Dufour, gravée par Ch. Dyonnet. Paris, 1857. Empire Ottoman, publié par J. Andriveau-Goujon. Paris, 1856. Central-Karte des Türkischen Reiches in Europa und Asien, von H. Kiepert. Berlin, 1855. Karte von Armenien, Kurdestan et ceter. von Dr. H. Kiepert. Berlin, 1858. Дорожная карта Кавказскаго края. Сост. при Генер. Штабѣ С.-П. Б. 1842. Карты: Кавк. и Закавказск. края. гг. Чихачева и Ханыкова; и другія

[2]) Կոստանդնուպոլսի Հայկական բարեգործական ընկերութեան նպատակն է Հայոց ազգաւոր մանուկները կրթել և դաստիարակել յոտ սկզբից երկրագործութեան և

*Վ*Հարտը տպվելուց յետոյ և կանխաւճար պարոններին իւրեանց օրինակները հասուցանելուց յետոյ, մնացած բոլոր օրինակները պիտի վաճառվին Բարեգործական ընկերութեան օգտի համար, նոյն ընկերութեան ընտրած գործակալների ձեռքով և լուսանդակ երկրագունդի վերայ, ուր ցրուեց տարաւ մեր աղգը նորան կործանող մրրիկը։

Եթէ մեր բացած ստորագրութեամբ, այնքան գումար գոյանայ, որ տպագրութեան ծախքից առաւելու, այն ժամանակ մնացորդ գումարը ևս պիտի հասանի յիշեալ Բարեգործական ընկերութեան, ըստ որում, մեր ազգատ կամքով, նա է քարտի տէրը, և մեք լոկ միջնորդ ենք այս բանում։

*Մ*Եր քարտի տպագրութեան երկրորդ օրը, Ռուսսիոյ և Թիւրքիոյ մէջ մեր աղգային օրագրերում հրապարակով կը տպենք կանխաւճար պարոնների անունները, նոցա առած օրինակների թիւը և գոյացած դրամի որքանութիւնը։ Կը տպենք նոյնպէս եղած ծախքի ցուցակը, այսինքն այն հաշիւները [1]), որ վերաճանական կերպով կը տան մեզ տեղագիր—նկարիչը, փորագրիչը, տպարանը և թղթավաճառը։ Սոցա հետ միասին կը հրատարակենք և մանր ծախքները, որոնց համար չենք կարող մասնաւոր հաշիւներ ստանալ մեզանից դրամ ստացողներից։

*Վ*Հաղար է մեզ հաւատալ, թէ այս մեր ձեռնարկութիւնը պիտի հանդիպի համազգային համակրութեան, առանց կուսակցութեանց խորութեան։ Եւ այս հաւատը մեք հիմնումենք մանաւանդ մեր կրկին նպատակի վերայ, որոնց մասին վերևում խօսեցանք և որ չենք կարծում թէ մերժելի երևին։

Դնումենք այս տեղ այն աշխատաւոր պարոնների անունները, որոնց մեծ կարելի է բաժանորդ գրուիլ մեր հրատարակելի քարտին և որոնց վերայ մեր ունեցած կատարեալ վստահութիւնը յայտնումենք հրապարակով։ Աշխատաւոր պարոնների թեթևութեան համար մի քանի տեղերում նշանակեցինք և աւելի աշխատաւորը, ինչպէս նեղքևում պիտի տեսանեն։

արուեստների մէջ։ Այս նպատակով հիմնվելու մասնաւոր (спеціальный) դպրոցը լուսաւով կը բացվի փոքր Հայաստանի մէջ, ուր հոգի արգասաւորութիւնը և ծավեղերայ դպրութիւնը մեծապէս դրաւումէ մեր բոլորի ուշադրութիւնը, որ մի հատ է իւր տեսակի մէջ և որի վերայ անչափելի մեծ են ազգի մտածողների յոյսերը։ Անդամ լինել այդ ընկերութեան կարելի է բաժիններ տուռնալով. իւրաքանչիւր բաժինը 6 արծաթ մանեթ է։ Ն. Պօլիս Բարիկ. ընկեր. անօքէն ժողովին պիտի ուղղել բաժնորդագրութեան դրամը, քանի որ ընկերութիւնը ձեռնհաս չէ եղած մեր մէջ մի գործակալ կարգելու։

[1]) Գ. Փոխադնդապետ Շվարեօվից մեզ հասած մնոտաւոր հաշիւը հասանումէ մինչև 7000 մանեթի արժանի։ Այս հաշիւն նայելով, յանգուցեալ ձեռնարկութիւն է մեր արածը. բայց կամենումենք, որ այս ևս անցանէ մեր ժամանակակից յիշատակարանների մէջ։

Քաղաքի անուանիքը.	Ալխտաստրնէրի անուանիքը.
Ս. Պ. Բուրգ.	Պ. Կարապետ Եզեանց, Մագիստրոս:
Մոսկվա.	Պ. Մեկբեն Գասպարեան Փանեանց:
Նոր Նախիջևան.	Պ. Յակոբ. Մատթ. Խըլըճեանց.
Թիֆլիզ.	Վարդապետ բժշկութեան Պ. Յովհաննիսեանց. Պ. Մկր. Մեսրոպեան Միանսարեանց. Պ. Համբարձում Էնֆիաճեանց. Պ. Յովհաննէս Քամանեանց.
Ղրըմ.	Պ. Յովսեփ Իզմիրեանց.
Աստրախան.	Պ. Մկրտիչ Մարգարեան Հայրապետեանց.
Սղնախ.	Պ. Պետրոս Սահարեան.
Գանձակ.	Պ. Մնացական Թեմուրեան (Բժիշկ).
Շուշի.	Պ. Դաւիթ Ռոստոմեանց (Բժիշկ).
Շամախի.	Պ. Սադա Դաւթեան Ալէքսանդրեանց.
Աբուլիս.	Պ. Բաղդասար Փանեանց.
Երևան.	Պ. Քալանթարեան, կառավարիչ Նամակատան.
Նիժնի Նովգորոդի վաճառատունի մէջ	Պ. Յովսեփ Իզմիրեանց. Պ. Անանիա Սուլթանշահ (Բժիշկ). Պ. Աստուածատուր Բարաղամեան Ռոդդանեանց.

Պատուելի աշխատաւորք կ'ստանան մեզանից մեր ստորագրութեամբ վաւերացած տոմսակներ, ուր գրելով կանխիկ վճարող պարոնների անունները, օրինակի թիւը և ստացած դումարը, կ'ստորագրեն նոյն տոմսակը և կը տան կանխավճար պարոններին: Առանց աշխատաւոր պարոնների ստորագրութեան (եթէ պատահին) երևան ելած տոմսակները ընդունվելու չեն, թէև լինեը այն տեղ մեր ստորագրութիւնը:

Աշխատաւոր պարոնները իւրեանց բաժանած տոմսակների թիւը, կանխավճար պարոնների անունները, նոցա ստանալի օրինակների թիւը և ստացա համեմատ ստացած դումարը իւրաքանչիւր տոմսակ դուրս տալու ժամանակ նշանակած լինելով տպած տետրակի մէջ, որ մեք նոցա ուղարկումենք և որ բաղկացնում տոմսակների մասը, կը բարեհաճին մեզ ուղարկել հետևեալ հասցեով — Въ С.-Петербургѣ, на Васильевскомъ островѣ, въ Биржевомъ переулкѣ, въ домѣ Мѣняева, на квартирѣ, подъ № 46-мъ. Кандидату С.-Петербургскаго Университета, Михаилу Налбандову.

St.-Petersbourg. (Russie) près de la bourse d'Hollande, maison Meniaeff. à Mr. Michel Nalbandoff.

Ա՛ր ստորագրութեան և մեզանից նշանակած աշխատաւոր պարոնների ստորագրութեամբ վաւերացած տոմսակներին պատասխանատու ենք կացուցանում մեր անձը և քաղաքականապէս և բարոյապէս։

Կանխաւճար պարոնները իւրեանց տոմսակը մեզ կամ աշխատաւոր պարոններին ներկայացնել և քարտը պահանջել այն ժամանակ ունին իրաւունք, երբ օրագրի մէջ հրատարակենք նորա տպագրութեան աւարտվելը որի համար գործ կը դնենք մեր բոլոր ոյժը և կօրութիւնը։

Ընդհայն օրագրերից խնդրումենք մեր յայտարարութիւնը տպել իւրեանց թերթերի մէջ, որով մեծապէս պարտական կը կացուցանեն մեզ։

Հրատարակող Մ. Նալբանդեանց։

Յունիս 20, 1860.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։

1. Հիսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, յատկապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Կենագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոյա կոչածադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան ֆիզիքական յայտնագործութիւնների, հասարակաց Աստեղաբաշխութեան, քիմիայի, Հանքաբանութեան և Գիւղիօլոգիայի վերայ. յատկապէս բանասիրութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին:

3. Խարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութենից. յատկապէս կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ցանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. Въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի Նամակատունը այսպիսի Հասցէով. Въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Ցարեկան 12 սեռարակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ:

Одобрено Цензурою въ С.-Петербургѣ, 22 Іюня 18,62 года.